ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ A.R.F. BURO LIBRARY

ՎՆԱՍԱԿԱՐ ՏԱՐԲԵՐ

—

Ամեն անգամ, երբ յեղափոխական փոքրամասնութեան անձնազոհ, տոկուն և անվհատ գործունէութեան շնորհիւ յեղափոխական կազմակերպութիւնը ձեռք է բերում ոյժ և ազդեցութիւն, կեանքի մէջ ստեղծւում է հաւատ դէպի գործի յաջողութիւնը և հարթւում է որոշ աստիճանով յեղափոխական ուղին, ամեն անգամ էլ հասարակութեան տարբեր խաւերի մէջ իրարանցում է ընկնում։ Բայց ընդհանրութեան յեղափոխական ոգու բարձրանալու հետ միատեղ, ամեն մի տեղից վերկացող բախտախնդիր, ամեն մի վաշխառու, կեղեքիչ, մինչև իսկ ժանտիչներ, դաւաճաններ, մի խօսքով ամեն տեսակ սողուններ, որոնք գիտեն հիանալի կերպով յարմարւել հանգամանքներին և ամեն տեսակ ջրերում ձուկ որսալ, ասպարէզ են դուրս գալիս, իբրև „յեղափոխականներ“ կամ յեղափոխութեան համակրող բարեկամներ։ Վնասակար են այդ սողունները պէդպիսի բոպէներում, երբ փքուն խօսքեր փչելով ու փարիսեցիական ձևեր բանեցնելով, շահագործում են ամբոխի դիւրահաւատութիւնը ու տգիտութիւնը։ Իսկ անտանելի են, ցաւ ու պատուհաս են դրանք յեղափոխական շարժման համար այն ժամանակ, երբ յեղափոխութիւնը կրում է ժամանակաւոր անաջողութիւն և սկսում են տիրել աւելի վատթար պայմաններ յեղափոխական գործիչների համար։ Այդ ժամանակ այդ զազրալի արարածները սուս ու փուս քաշւում են իրենց բները, և արդէն „խոհեմութիւն“, „հեռատեսութիւն“, „ժողովրդասիրութիւն“, „միութիւն“ և այլ դիմակների տակ դարձեալ շարունակում են խաղալ ժողովրդի հետ, աշխատելով մի կերպ քողարկել իրենց իսկական գոյնը։ Շարունակելով կրել „յեղափոխական“ „ազգասէր“ տիտղոսները, դրանք դառնում են իսկական յեղափոխական գործի ամենավնասակար խոչընդոտներ։

Այդ արարածները աղբեր են, որոնք մեծ ու փոքր կոյտերով, տեսակ տեսակ բուրմունքներով և գոյներով թափւած յեղափոխական ճանապարհի վրայ, ապականում են յեղափոխական միջավայրը։

Ամեն մի յեղափոխական գործիչ ստիպւած է ժամանակ առ ժամանակ թողնել իր բուն գործը և զբաղւել այդ աղբերով, որոնք ընկնում են ոտքերի տակ և խանգարում իր կանոնաւոր ընթացքը։ Ժամանակ առ ժամանակ, կամայ ակամայ նա իւր վրայ պէտք է առնի այդ զզուելի աշխատանքը, իմանալով հանդերձ, որ իւր ցախաւելի հենց առաջին հարւածից այդ կոյտերը միանգամից կը բացւեն և կը լցնեն օդը իրենց գարշահոտութիւններով։ Արձակւած բամբասանքների, զրպարտութիւնների, ինտրիգաների մթնոլորդի միջով պէտք է դիմի յեղափոխական իսկական գործիչը դէպի իւր բուն նպատակը։

Կեանքի մէջ տեսնում էինք կուսակցութիւնների միութիւն քարոզող ուտոպիստներ, այդ միութեան անունով նոր, իրենց ա ն ձ ն ա կ ա ն կուսակցութիւններ կազմողներ և այս ձևով բուն գործից խոյս տուող սնափառներ, անվերջ պատրաստութիւնների ձգտող և ոչ մի պատրաստութիւն չտեսնող խոհեմ յեղափոխականներ, զանազան տեսակ խաբեբաներ, շարլատաններ. այժմ էլ քիչ չէ բարեսրտութեան դիմակի տակ մտած բախտախնդիրների թիւը, որոնք իրենց ետևից տանում են միամիտների մի բանակ։ Դրանք սկսել են նոր ձևի տակ մի նոր արշաւանք „Դաշնակցութեան“ դէմ, որի առթիւ աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել։

„Ժամանակ չէ այլևս յեղափոխութեամբ պարապւել, այժմ հաց պէտք է տալ ժողովրդին և ոչ թէ զէնք“, լսում ենք ամեն կողմից ժողովրդի դրութեան վրայ կոկորդիլոսեան աղի արցունք թափող փարիսեցիներից։

Իսկապէս, ահա ամենայարմար բոպէն երևան գալու իբր վերին աստիճանի բարի, զգայուն, փափուկ սրտի տէր մարդ, իբր խոհեմ, ժամանակի պահանջներին յարմարւող, ժողովրդի ցաւերը ճանաչող գործիչ։ Բացի այդ, բարեգործութեան դիմակի տակ կարելի է և վտանգի չենթարկել իւր անձը, որն այնքան թանկ է հայրենիքի համար. իբր արթուն հովիւ պէտք է հսկել իւր սիրեցեալ ժողովրդի վրայ, չլինի թէ նա մոլորւի և տարւի „ծայրայեղ“ յեղափոխականների դէպի կորըստեան անդունդը տանող գործունէութեամբ։ Ահա ա-

մենայարմար բոպէն ամենաարժան գնով ու ամենաանվտանգ ճանապարհով իսկական ազգասէրի մեծ հրաչակ ձեռք բերելու։

„Ժողովրդին հաց պէտք է տալ“, ասում են մեր ժողովրդի „իսկական բարեկամները“։ Ո՞վ է հակառակը պնդում. ո՞վ է ասում, թէ հարկաւոր չէ հաց տալ։ Բայց դուք ինքներդ ինչո՞ւ գոնէ այդ չէք անում, ինչո՞ւ այդ պարտքն էլ ծանրաբեռնում էք յեղափոխական կազմակերպութիւնների վրայ։ Ո՞ւր էիք դուք, երբ Սասունի կոտորածից յետոյ „Դաշնակցութիւնը“ ստիպուած եղաւ մասամբ շեղել իւր բուն գործունէութիւնից և բարեգործութեամբ զբաղուել՝ իւր սեփական միջոցներից դրամական նպաստներ բաժանելով բոլորովին անօգնական մնացած երկրին։ Ո՞ւր էիք դուք վերջին կոտորածներից յետոյ, երբ դարձեալ „Դաշնակցութիւնն“ առաջինն եղաւ թշուառ, թալանուած, արիւնաքամ ժողովրդին անմիջական դրամական օգնութիւն հասցնողը։

Այժմ էլ, երբ դուք զբաղուած էք միայն հայրենասիրական քարոզներ արտասանելով և չնչին կոպէկներ էք միայն հանում ձեր հաստափոր բարեկամների դրպաններից, դարձեալ ամերիկացի, անգլիացի, մինչև իսկ գերմանացի և շվեյցարացի պաստօրներն են մեր ժողովուրդին օգնութիւն հասցնողը։

Ամօթ ձեզ...

„Ժողովրդին այլևս զէնք չպէտք է տալ“։ Այս խօսքերն արտասանւում են այն ժամանակ, երբ փաստերը պարզ ցոյց են տուել, որ կոտորուել, թալանուել, աւերուել են այն գիւղերը, ուր ինքնապաշտպանութեան համար զէնքի հարկաւոր քանակութիւնը չկար, երբ արդէն ձեռքի տակ ունինք փայլուն ապացոյցներ, որ այն տեղերը, որտեղ մենք ունեցել ենք զէնք կամ զինուած հայդուկներ, կռուել, պաշտպանել են իրենց կայքը, գոյքը կամ թէ բոլորովին ազատ են մնացել յարձակումներից։ Այս խօսքերն արտասանւում են այն ժամանակ, երբ Տաճկահայաստանի ամեն կողմերում, մանաւանդ ազատ մնացած վայրերում, օրէօր սպասւում են նորանոր ընդհարումներ, երբ կառավարութիւնը պատրաստ իւր տրամադրութեան տակ է պահում իրեն ծառայութիւններ մատուցած համիդիական գնդերին և միւս կիսավայրենի լեռնականներին, երբ միւս կողմից զէնքի նշանակութիւնը հասկացած հայ ժողովուրդը յուսահատական աղաղակներ է հանում և ձեռքերը պարզած զէնք է հայցում. երբ թալանուած գիւղերն իրենք իրենց մէջ հանգանակութիւն են բացանում իրենց վերջին կոպէկները դուրս են հանում զէնք ձեռք բերելու համար։

Ժողովուրդը զէնք է պահանջում, իսկ մեր խոհեմ գործիչներն աշխատում են հաւատացնել ժողովրդին, որ նա սխալւում է. նրան ոչ թէ զէնք է հարկաւոր, այլ հաց...

Հաւատա՞նք այդ խոհեմների անկեղծութեան։

„Հարկաւոր է դադարեցնել յեղափոխական շարժումը“, պահանջում են նրանք։ Այս կէտում դրանց հետ միանում են և նրանք, որոնք վերջին կոտորածների տպաւորութիւնից դեռ չեն ազատուել և խօսում են աւելի զգացմունքով, քան թէ խելքով։

Մենք արդէն քանիցս անգամ առիթ ենք ունեցել ցոյց տալ, որ յեղափոխական շարժումն անհնարին է կանգնեցնել, քանի որ նա հետևանք է Տաճկահայաստանում տիրող անտանելի պայմանների, և քանի վատթարանան այդ պայմանները, այնքան աւելի սաստիկ պէտք կը զգացվի ուժեղ յեղափոխական շարժման։ Միմիայն իրերի անկարգ դրութեան բարեփոխումը կարող է վերջ տալ յեղափոխական շարժման։

Պահանջելով դադարեցնել յեղափոխական շարժումը, դրանք կողմնակի կերպով մեղադրում են յեղափոխականներին, համարելով նրանց այդ բոլոր աղէտների պատճառը։ Կոտորածների պատասխանատուութիւնը յեղափոխականների վրայ բարդելով և յուսահատութեան մէջ ընկնելով, այդ կարճամիտները մոռանում են մարդկային պատմութիւնը. մոռանում են, որ ուրիշ ազգեր աւելի սոսկալի արհաւիրքների միջից են անցել և իրենց ազատութեանը հասել. մոռանում են և հայոց պատմութիւնը, դարերի ընթացքում հայերի կրած դժոխային տանջանքները։

Դառնալով վերջին կոտորածներին, հարցնում ենք. չե՞նք չափազանցում արդեօք դրանց բացասական նշանակութիւնը։

Վերջին դէպքերը մեծ հարուած էին հայ ժողովրդի համար, այդ անհերքելի է. ամենքն այդ զգացին և սոսկացին՝ թէ մենք և թէ ուրիշները. զգացին, որովհետև մեր թշնամիները գործում էին սրերով, հրացաններով, որովհետև ամենքի աչքի առաջ արիւն էր հոսում և այդ բոլորը կատարւում էր ազատ համարձակ։

Սակայն մենք մինչև այժմ էլ նոյնպէս զոհեր էինք տալիս, հայ ժողովուրդն արիւնաքամ էր լինում, հայաբնակ գաւառներն ամայանում էին կամ բռնւում քրդերով, չէրքէզներով և այլ լեռնականներով, բայց ոչ ոքի վրայ այս հանգամանքը հարկաւոր ազդեցութիւնը չէր թողնում, ոչ ոք չէր սոսկում, չէր կատաղում, ոչ ոք չէր մտածում հարկաւոր չափով ժողովրդի այս անտանելի պայմանների մասին։ Այստեղ սուրը հաղթ էր խաղում, արիւնը հաղթ էր հոսում, բայց և այնպէս ժողովուրդը ուժասպառ էր լինում և լուռ ու մունջ կոտորւում երկրի ընդհանուր պայմանների ճնշման տակ։ Ո՞ւր են մեր բազմամարդ հայաբնակ գաւառները, ո՞ւր են նրանց չարքաշ բնակիչները։ Թողնենք հեռու անցեալը։ Մեր աչքի առաջ դատարկւում են զգալի կերպով Մշոյ դաշտը, Վասպուրականը, Կարնոյ և Բաբերդի շրջակայքը, Խնուսը, Բասենը... Մեր աչքի առաջ Ալաշկերտը Բայազէտի հետ միասին կորցրին իրենց

բնակիչների 9/10 մասը. զուտ հայաբնակ Խիզանում մը-նացել է հազիւ մի երկու գիւղ։ Մինչդեռ ոչ ոք չի լսել, որ այդ կէտերում կոտորած եղած լինի։

Չէ՛, հայ ժողովուրդը անկարող է ապրել Ցաճկա-հայաստանում տիրող կարգերում։ Նա ուժասպառ է լինում, նա մեռնում է։ Նա չէ կարող չբողոքել, ոտի չկանգնել և չդիմել յեղափոխութեան, իբրև իւր միակ փրկարարին։

Մեր „խոհեմ ազգասէրների“ բոլոր քարոզները շատ-շատ կունենան բացասական նշանակութիւն, կը դանդաղեցնեն յեղափոխական ընթացքը։ Կարո՞ղ էք արմատախիլ անել հայ ժողովրդի արեան մէջ մտած կեանքի նորանոր պահանջները, կարո՞ղ էք փոխել նրա ուղեղը և նեարդները, յոյս ունե՞ք նրան դնել սորկական, անասնական դրութեան մէջ,—եթէ այո՛, փորձեցէ՛ք, և այն ժամանակ միայն դուք կարող էք յոյս ունենալ յեղափոխութեանը վերջ տալու։

Ժողովուրդը սկսել է յեղափոխութիւնը և նա կը տանի մինչև վերջը, իսկ առայժմ նրան մնում է լաւ ճանաչել յեղափոխական ճանապարհի վրայ ընկած զանազան տեսակ աղբերի իսկական նշանակութիւնը և մի կողմը շպրտելով դրանց, անարգել կերպով շարունակել իւր փրկարար կռիւը։ Բուլգար.

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

—

31/12 ապրիլ 96 թ.

Բուլգարիոյ իշխանը դահիճ սուլթանին հեշտալիր մեծարանքովը շլացած՝ թերևս բաւական կը մնայ. իր գահին ապահովութեան համար միլիոններ զոհող անխիղճը, սուլթանին ու ցարին սիրելի ըլլալու համար՝ դիակներու վրայ անհոգ կը պարէ։ Մակեդոնիան կոտորուած է ու սուլթանական անագորոյն ճիրաններէ ազատած Բուլգարիան աւելի վայրագ թշնամի մը՝ ցարին կենթարկուի։

Երբ Ֆէրդինանդը Պոլսի փողոցները իր հետևորդներով գոհ ու ուրախ կը շրջի, ի՞նչ կը մտածեն արդեօք Մակեդոնիոյ սովալլուկ գիւղացիներն ու 95-ի հերոս նահատակներուն սուերները։ Սորկութեան ամեն երանգներով ծածկուած Մակեդոնիան ո՞վ գիտէ, ի՞նչ խուլ կը բողոքէ, բողոք մը, որ բռնակալութեան դատապարտութիւնն ու անկումն է։ Բողոք մը, որ օր մը Համիդներու ու Ֆէրդինանդներու դժոխային ծիծաղները յուսահատական վայնասուններու պիտի փոխէ։

Մակեդոնիան անօթի է ու Ֆէրդինանդը սուլթանի ծառաներուն ոսկիէ թանկագին ընծաներ կը բաշխէ. արդեօք գո՞հ է բուլգար ժողովուրդը՝ որ իր արիւն քրտնքին վաստակը դեռ քանի մը տարի առաջ իրենց արիւնը խմող ճիւաղներուն տուէր։ Եւ սուլթանը մինչդեռ բարեսրտագուններու գործադրութեան հարկաւոր դրամը չունի կրսէ, տասը հազար ոսկի կը մնէ Ցէֆիթէրտարի պալատը նորոգելու համար, ուր ընդունուեցաւ իր „սիրական իշխանը“։

Ֆէնէրի բուլգարական եկեղեցիին այցելութեան ատեն, երբ իշխանը ներս մտաւ, մակեդոնացիներու հոծ բազմութիւն մը կեցցէներով ցայն ողջունեց, իսկ երբ դուրս ելաւ՝ խոր լռութիւն կը տիրէր. այդ միջոցին երիտասարդ մակեդոնացի մը մօտենալով՝ ուղերձ մը ներկայացուց իշխանին. հետևորդ թիւրք փաշան ուզեց առնել, բայց երիտասարդը քաշելով ձեռքէն իշխանին երկնցուց ըսելով. „Ձեզի համար է մակեդոնացիներու կողմէն“, որ ընդունեց։ Ընդհանուրին արտայայտութիւնը տխուր էր. ամենքը լաւ կըմբռնէին իրենց կացութիւնը և գիտէին թէ՝ որի հետ է գործերնին։

Մակեդոնական շարժումը խեղդել ջանալէ վերջ, այժմ Ռուսիան կաշխատի բուլգար էկզարքութիւնն ալ ջնջել ու յունական պատրիարքին վերադարձնել Մակիդոնիոյ մէջ իր նախկին իրաւունքները։ Այս մասին ձեռնարկներ ըլլալ սկսած են։

Ֆէրդինանդ իշխանի Պոլիս այցելութիւնը զգացող հայերու համար կատաղութեան նոր առիթ մըն է. չէ՞ մի որ մեր դահճին նկատմամբ ամեն համակրութիւն զայն քաջալերել ու հազարաւոր անմեղ նահատակ հայերու յիշատակն անպատուել է։ Մակեդոնացիին համար այս վատութիւնը յուսահատ մոլեգնութիւն կը պատճառէ։ քանի որ այս դէպքին մէջ կը նշմարէ իր դատին փըճացումը։ Ֆէրդինանդը իր թագին գնովը ծախեց Մակիդոնիան։

Յեղափոխական Մակիդոնիան յուսահատ չէ սակայն, նա վստահ է իր յաղթանակին վրայ...

Մեր սրտագին մաղթանքները մակեդոնացի յեղափոխականներուն՝ իրենց սրբազան գաղափարի յաղթանակին համար։

*
* *

Բուլգարիոյ իշխանը իր երեսը ծածկած է հայոց պատրիարքի կողմէ ղրկած պատգամաւորութեան ու պատին ետևէն իր շնորհակալութիւնը ղրկած է հայոց պատրիարքին։ Հանելուկը լուծել դժուարին չէ։ Ֆէրդինանդ իբրև հիւր սուլթանին, նախապէս հրահանգ ստացած է Եըլտըզի ներքինանոցէն՝ սառն վերաբերուել դեպի հայոց պատրիարքարանը, որ Իզմիրլեան դժնիկ փուշ մըն է սուլթանի կասկածոտ, սարդանարաղոսի աչքերուն։ Նոյն իմաստով հրահանգ տուած է Ռուսիոյ դեսպանատան կողմէն։

Ֆէրդինանդ, այսպէս, ինքզինքը գտած է երկու սուրերու մէջ, մանաւանդ որ ինքն ալ տափակ մարդ մըն է, անկարող գնահատելու դեպի ազատութիւն ձգտող ազգի մը դիւցազնական, մարտիրոսական ջանքերը, այնքան շուտ մոռանալով թէ՝ ինքն այսօր իշխան է ազգի մը, որ հայոց վիճակէն էր ասկէ 18-20 տարի առաջ։ Ֆէրդինանդի այս վարմունքը չի կըրնար մեզ վիրաւորել, կը ցաւինք իր վրայ այնպէս, ինչպէս տխմարի մը վիճակին։

*
* *

Զատկայ տօնին, Ս. Պատրիարքը, իր ընդունելութեան օրը բազմաթիւ հանդիսականներու ներկայութեանը

համառօտ տեսութեամբ մը կը պարզէ իր գործառնութիւնները, սուր լեզուով մը ջրելով կարգ մը ամբաստանութիւններ, որոնք պատրիարքին կը վերագրեն ինչ ինչ անտեղի ձգտումներ, իբրեւ թէ Իզմիրլեան պատրիարքի իրաւասութենէն դուրս ելած, իրաւունք տուած ըլլայ, որ Թիւրք կառավարութիւնը կասկածոտ աչքով դիտէ Հայոց Պատրիարքարանը։ Իզմիրլեան ըսած է թէ՝ ինքը, միշտ համաձայն իրեն գործակից վարչական ժողովներու հետ, իր պատրիարքութեան առջի օրերէն սուլթանի կողմէն եկած պատուէրի մը համեմատ, ճշմարտախօս միջնորդ մը եղած է Ըլլտըզի ու Հայոց ազգին միջեւ. գաւառներէն եկած տեղեկութիւնները ճշտապէս հաղորդած է Դուռն, ինչքի, կեանքի ու կրօնքի պահպանութիւնը խնդրած է միշտ։ Ասոնք եղած են իր գործերը, եւ երբ պատեհ առիթը գայ, ազգը ներկայացնող ժողովին առջեւ իր գործքերուն մանրամասն հաշիւը տալէ չի փախչիր։

Իզմիրլեան, բնականաբար վշտացած, ինչպէս ամէն հայ ներկայ վիճակէն, սակայն յուսահատ մարդու մը երեւոյթը չունի իր սուր ու խայթող նայուածքին մէջ։ Զինքը կը թթուեցնեն ներքին անկարգութիւններ, նենգութիւններ, խաբեբայութիւններ, որոնք յեղափոխութեան անունին տակ, օձի գալարներով կը սպրդին ամէն տեղ, կը կողոպտեն, կաւազակեն պոռնկանոցները կշտացնելու համար։ Յեղափոխական անունին տակ շահատակող կարգ մը գործիչները իրենց պատասխանատուութիւնն ըմբռնելու աստիճանին չբարձրացան դեռ. լաւ կազմակերպութեան մը շնորհիւ, իրենք կրնային արգելել շատ անկանոնութիւններ, եւ իրենց գործքերու վրայ ունեցած ճշգրիտ քոնդռոլով մը, ահ ու սարսափ ձգել խաբեբաներուն մէջ։ Ասոնք կուշանան, որով ազատ միջոց տրւեցաւ մանկական խաղերու, աւազակներու, խաբեբաներու, այնպէս որ, Յեղափոխութիւնն իր ամբողջին մէջ այսօր ցեխոտ, կեղտոտ երեսներով կերեւայ հայ ընկերութեան առջեւ։ Ասոնք ծանր են անշուշտ լսելը ոմանց կարծիքով պէտք չէ անպատրւակ խօսել, պարտկելու է կըսուի, նոյն իսկ տկարութիւնները ու ծիածանի գոյներ ցոլացնել անոնց վրայ։ Ուղղութիւն չէ սա. Յեղափոխական մարմինները խորշելու են ստութեան, խաբեբայութեան երեսէն. Նախապէս իրենք վրէժխնդիր ըլլալով ատոնց դէմ, կեղծ դիմակները բզըկտելու եւ ինկած վարկերը բարձրացնելու են։

* * *

$^{5}/_{17}$ ապրիլ 96 թ.

„Դաշնակցութեան“ ահաբեկիչներէն մին Կալաթա-Գարաքէօյ-Ենի խանին 3-րդ յարկը նշանաւոր վաշխառու խասգիւղցի Եղիա Շահբազեանի գրասենեակը՝ Պոլսի Կեդրոնական Կոմիտէին մէկ պաշտօնագիրը տարած ու արտաքին բաժնին մէջ յիշեալին գրագրին յանձնած երբ կը վերադառնար՝ առաջին սանդուխէն իջած պահուն Եղիային ձայնը կը լսէ, որ ոստիկան կը կանչէր. ահաբեկիչը մտածելով որ նամակը ոստիկանութեան պիտի յանձնուի, կը վերադառնայ ու բռնի ձեռքէն նամակը առնելով՝ կը մեկնի. բայց Շահբազ կսկսի ետեւէն „բռնեցէ՛ք բռնեցէ՛ք“ պոռալ ու մինչ դեռ ահաբեկիչը դէպի վեր կուղղուէր զէնքը մատնել յանդգնող դաւաճան գրագիրն ու էֆէնտին Կեդրոնական Կոմիտէի որոշ հրահանգին համեմատ սպաննելու համար, խանին դռնապանները ետեւէն երկու ձեռներուն դաստակներէն կը բռնեն։ Իզուր ահաբեկիչը կը յորդորէ զիրենք որ թողուն զինքը ըսելով՝ թէ ինքը յեղափոխական մըն է ու իրենց պէս թշուառներու փրկութեանը կաշխատի. բռնակիրները չեն ուզեր լսել. այս վտանգաւոր կացութենէն ազատելու համար կը յաջողի աջ ձեռքովը հանել ատրճանակը ու բռնողներուն պարպելով՝ ձեռքերէն կազատի։ Քիչ մը շւարած, կարծելով թէ Շահբազի յարկին վրայ է, կը բանայ իր դէմի դուռը եւ տեսնելով թէ սխալած է, կը դառնայ, բայց բռնակիր մը իր անցքը խափանելու համար դուռը գոցել կուզէր, ձախ ձեռքն ունեցած երկրորդ ատրճանակ մը անոր ոտքերուն կը պարպէ եւ դուռը բանալով կսկսի վար իջնել, երկրորդ սանդուխին վրայ կը պատահի Թուրքի մը, որ նոյն պահուն Շահպազին սենեակն էր. սա սարսափած կսկսի աղաչել, որ խնայէ իրեն։ Մեր կտրիճը արհամարհոտ եղանակով մը „հայտէ գնայ, կեանքդ զաւակներուդ բաշխեցի“ կըսէ ու կանցնի։ Վերջին սանդուխին գլուխը բռնակիրի մը կը հանդիպի, որը ապտակով մը կը տապալէ եւ անխռով շարունակելով իւր ճամբան հանդարտ քայլերով խանէն դուրս կելլայ ու կանհետանայ։ Այժմ ամէն վտանգ վերցած է իրեն համար։ Ոստիկանութիւնը շատ ջանքեր կընէ զայն գտնալու, բայց չպիտի յաջողի։

Ենի խանի դուռը Կալաթիոյ ամէնէն բանուկ հրապարակին վրայ է, զինուորական ու ոստիկանական կըրկին պահականոցներէ քայլ մը միայն հեռու, հրապարակին ամէն անկիւնները ոստիկան ու ոստիկան զինւորներ կան, իսկ ճամբուն վրայ լրտեսներ միշտ կը վխտան։

Դէպքը պատահեցաւ երեքշաբթի, ապրել $^{2}/_{14}$-ին, ցորեկուան ժամը եւրոպական մէկին։

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

I

$^{9}/_{21}$ յունուար, 96 թ.

Կիլիկիոյ բոլոր քաղաքներն ալ զերծ չմնացին բռնաւորի դժոխային վրէժխնդրութենէն։

Այնթապու մէջ մեր զոհերու թիւը կը հաշուեն 800-էն մինչեւ 1000։ Աւարառութիւնք խիստ մեծ են, հրձիգութիւնք սահմանափակ՝ 7-8 տան չափ միայն։

Կիլիկիոյ շատ մը քաղաքաց հետ յարաբերութիւնք 3 ամիսէ ի վեր ընդհատուած են։ Վաճառականութիւնը մեռելութեան դատապարտուած է։ Վնասներն աներեւակայելի են։ Գրուած նամակներն թրքական ցած գրաքննութեան չենթարկուած՝ չեն յանձներ իրենց տէրերուն։ Հայերն իրենց տներէն դուրս ելլելու չեն համարձակիր։

ժողովրդեան մեծ մասն անսւաղ կը տառապի…

Զանազան քաղաքներ մասնաւոր քննիչներ ղրկւեցան, բայց ատիկա ուրիշ բան չէ, եթէ ոչ Թիւրք կառավարութեան խայտառակ մի ձեւակերպութիւնը, միշտ ի վնաս հայուն: Այն նշանաւոր ազգայինները, որոնք կոտորածէն ազատւած են, բանտերու մէջ կը գտնւին: Ասոնք կամ բաստանեւին իբր թէ դրամով և այլ միջոցներով նըպաստած լինին Զէյթունի ապստամբութեան:

Ուրֆայի վերջին դէպքի զոհերն 6000-էն աւելի կը հաշւեն: Պիրէճիկ, ուր խիստ փոքրամասնութիւն կը կազմեն հայերն, գրեթէ ոչնչացուցած են: Հաճնի շըրջակայք և Զէյթունի բոլորտիքը գտնւող բոլոր հայաբնակ գիւղերը, Չմշկածակի և Արաբկիրի պատկերը կը ներկայացնեն, ինչպէս նաև ուրիշ շատ տեղեր, որոնց քստմնելի մանրամասնութիւններն պաղարիւնութեամբ լսելն իսկ անկարելի է…

II

$^{6}/_{18}$ փետրւար 99 թ.

Կոտորածներու մանրամասնութիւնք կը պակսին դեռ ևս: Այնթապի նիւթական վնասը 400,000 օսմանեան ոսկի հաշւեր և մատուցեր են կառավարութեան, որ ինքը կողոպտեց արդէն: Անձի կորուստ 4-500 հոգի միայն: Մարաշէն, Այնթապէն և Քիլիսէն բազմաթիւ մարդիկ բանտարկւած են: Կը լսենք թէ՝ ասոնք ամբաստանւած են իբր թէ Զէյթունի ապստամբներուն օգնած ըլլան:

Ուրֆա, Պիրէճիկ, Արաբկիր, Խարբերդ, Տիգրանակերտ և բոլոր իրենց շրջակայ հայ գիւղերու մէջ սոսկալի անգթութիւններ գործւած են: Կըսւի թէ՝ 200-էն աւելի աղջիկներ (վերջին ստոյգ լուրերուն նայելով, 1000-էն աւելի է յափշտակւած կանանց թիւը) յափըշտակւած և դէպի Մուսուլ տարւելով՝ տեղական ցեղապետներուն ծախւած են՝ իւրաքանչիւրը 50 փ ա ր ա յ ի:

Զէյթունի խնդիրը կարգադրելու համար գնացող հիւպատոսները դեռ Մարաշ չհասած, սուլթանի հրամանաւ Էթհէմ փաշան պաշիպոզուկներով յարձակում մ'ըրած է Ծննդեան խթման օրը, բայց հազիւ թէ մի քանի պահակները կրցած է կոտորել, վերջին պահականոցէն մեծ յարձակում մը լինելով՝ ահագին կոտորած մը տեղի ունեցած է: Թէև ստոյգ լուրեր կը պակսին, բայց սա չափը ճշմարիտ է, որ Մարաշի եկեղեցիներն ու աղօթարանները լիքն են վիրաւորեալ Թիւրք պաշիպօզուկներով և զինւորներով: Այս մեծ պարտութենէն յետոյ Էթհէմ փաշան ստիպւած է զօրքերը վար իջեցնել Մարաշ:

*
* *

Կոտորած եղած տեղեր, մեր հարուստ տեսած ընտանիքներէն շատերը նպաստներով կապրին: Ուրֆայի մէջ մարդ չէ մնացեր: Մարդկային ամենահրէշային վայրագութիւններ հոն ի գործ դրւած են խեղճ անզէն հայոց վրայ: Պիրէճիկ նոյնը ըրած են, ուր 189 մեռեալ և ողջ մնացածներն ալ Թրքացուցած են:

Այժմ Պոլսէն և Ատանայէն պաշտօնեաներ կը ղըրկւին, որպէսզի Թրքացածներն իրենց կրօնին դարձնեն: Ի՞նչ յիմարութիւն. ո՞վ կարող է ըսել թէ՝ զիս բռնի Թրքացուցին, գիտնալով, որ վերջը ի՛նչ զարհուրելի փորձանքներ պիտի գան իրենց գլխուն:

Մարաշի մէջ կորուստը խիստ մեծ է: Շատ անձեր զոհ գացեր են վայրագութեանց: Մեռեալներու մէջ բացի վեց քահանաներէ, որք են՝ Տ. Գէորգ, Տ. Արսեն, Տ. Վարդան, Տ. Յովհաննէս (Վարժապետեանը չէ) և մի ուրիշը, ու 500-ի չափ ընտիր երիտասարդներ և ուրիշները. միմիայն լուսաւորչական հայոց կորուստը 800-էն աւելի է:

Ողջ մնացածներն նահատակւածներէն թշւառ են. անոնք մի անգամ մեռան սրով կամ բոցի մէջ, բայց ասոնք, այս կենդանի մնացածները.—անտուն, անպատսպար, անօթի, մերկ և իրենց կեանքն ու պատիւը բարբարոսին ձեռք մնացած… Վէրքը լայն և խոր է. ո՞վ պիտի բուժէ զայն…

Նպաստները շատ դանդաղ կը հասնին: Փարօ

ՍՊԱՐԿԵՐՏ

(ՎԷՐՋ)

II

Ինչպէս ասացի, մեր սուրհանդակների բերած տեղեկութիւնները դեռ շատ թերի են, որովհետև նրանք կարողացել էին 2 ամիս մնալ և մտնել գաւառի խորքերը, ուր աջուձախ կոտորած, կրօնափոխութիւն էր տեղի ունենում: Նրանք գրեթէ ամեն տեղ յայտնւում են և խրախուսելով „Դաշնակցութեան“ խմբերը՝ շատ տեղեր յամառ դիմադրութիւն են ցոյց տալիս: Բայց երբ ամբողջ գաւառը վերջնականապէս ընկճւում է և մահմեդականութիւն ընդունում, բնակիչներից հազար հոգու չափ, որոնց մեծ մասը երիտասարդներ են լինում, քաշւում և թափւում են Մոկս, գիշերները քայլ առ քայլ ճղելով ձիւնը՝ ու անցնելով սարերի վրայով: Սուրհանդակ Շ-ի դրդմամբ երիտասարդները գիշերով կոտրում են 4 գիւղի, այնէ՝ Սև-Քարի, Ճաճւանի, Հիւրիւկի և Կոտենցի տնկած դրօշակները, որից մօլլաները վախենալով, թէ հայերը ույժ կազմած կարող են իրենց վրայ յարձակւել, փախչում են այդ գիւղերից: Մոկս հասնելով, փախստականները մի կերպ տեղաւորւում են այդ գաւառում, ողբալով մէկը իւր եղբօր, միւսը՝ հօր, երրորդը՝ զաւակի մահը… Սուրհանդակները վերցնելով իրենց հետ 70 երիտասարդներ, իջնում են Ռշտունիք, Վան գալու համար: Կառավարութիւնը գլխու ընկնելով, խիստ արգելում է դրանց առաջ ընթանալ, սակայն Շ… և իւր ընկեր Մ… փախչում են և այժմ Վանումն են:

Քիւրդ շէյխերը և մօլլաները, որոնք հետամուտ էին այդ երկուսին ձեռք բերելու, լսելով, որ նրանք խոյս տւած են՝ մեծ բազմութիւն հետները տանելով, որով ամեն ըղեռնագործութիւն երևան պիտի գայ, անմիջապէս տեղեկութիւն են տալիս Բիթլիզի վալիին. վերջինս երեք անգամ պաշտօնական հեռագրով պահանջեց Վա-

նի վալի Նազըմ փաշայից մեր այդ երկու սուրհանդակներին. Նազըմ փաշան պաշտօնապէս պահանջեց առաջնորդից այդ երկու մարդուց: Ինչ խօսք, որ չյանձնեցան և առաջնորդը որտեղի՞ց գիտէ դրանց, որ նրան են դիմում այդպիսի պահանջումով. սուլթանի կառավարութիւնը իրեն գեաղայութիւն չանող հոգևորականին նկատում է իբրև յեղափոխական: Սոյն տեղեկութիւնները հաղորդուած է նաև Վանայ երեք հիւպատոսարաններին:

Սուլթանի ղրկած մեծ խմբով սօֆթաներից մի քանիսն արդէն նստած են Խիզան և Սպարկերտ ու մահմեդականութիւն են քարոզում: Բռնի մահմեդականացածներից ով որ միջոց է գտնում, փախչում է մօտակայ գաւառները կամ Վան: Նոր լուր առանք, թէ մահմեդականացած հայերը, որոնք բռնի, առերես են մահմեդականութիւն ընդունած, եթէ գաղտնի կերպով ծէսեր են կատարում կամ աղօթում, սոսկալի պանջանքների են ենթարկւում: Ինչպէս մի կին, գաղտնի աղօթելու ժամանակն նկատուելէ, ձեռքերը կտրում և գետն են ձգում: Դիմադրութեան ժամանակ հայերը մօտ 30 քիւրդ են սպանում, նոյն չափ էլ վիրաւորում:

ԿՈՏՈՐԱԾԻ ՑՈՒՑԱԿԸ

(Թերի է, որովհետև սուրհանդակների դուրս գալուց յետոյ չգիտենք ինչ է կատարուել):

1.	Սև-Քար	15	Տուն	15	Սպան.,	Դիմադր.
2.	Ճաճւան	40	„	39	„	կռուած
3.	Կոտենց Վերին	30	„	17	„	„
4.	„ Ներքին	10	„	7	„	—
5.	Ներքան	8	„	5	„	—
6.	Օղանդ	13	„	12	„	—
7.	Հիւրուկ	30	„	18	„	—
8.	Բազենց	20	„	10	„	—
9.	Լւառ	15	„	8	„	—
10.	Բազնից վանք	15	„	2	„	—
11.	Թաղ	15	„	4	„	—
12.	Կեղես	10	„	8	„	—
13.	Տանձիտ	10	„	4	„	—
14.	Տօսու	25	„	9	„	—
15.	Դալարս	20	„	7	„	—
16.	Ցարգին.	5	„	4	„	—
17.	Հիւսպ	20	„	12	„	—
18.	Խոյթ	15	„	6	„	—
19.	Հիւրուկներ	20	„	7	„	—
20.	Պատրաց	10	„	8	„	—
21.	Սորի	25	„	8	„	կռուած
22.	Բերդաղ	10	„	6	„	—
23.	Բաստ	55	„	60[1])	„	կռուած
24.	Սորւա վանք	„	„	3	„	—
25.	Կեղիսի վանք	„	„	2	„	դիմադրած
26.	Սօզանց	21	„	13[2])	„	կռուած
27.	Առնջիկ	20	„	9[3])	„	դիմադրած
28.	Կռան	5	„	3	„	—
29.	Տւաղուս	20	„	11	„	—
30.	Դաշտ	11	„	7	„	—
31.	Մատ	20	Տուն	13	Սպան.	—
32.	Մատածմէն	13	„	6	„	—
33.	Շերնիկ վանք	13	„	4	„	—

1) Բաստի մէջ դիակները հաւաքել եւ այրել են քիւրդերը:
2) Սօզանցի մէջ քահանան դիմադրելուց յետոյ երրորդ յարկից իրեն վար է նետում եւ ջախջախւում:
3) Առնջիկ դիակները այրում են:

* * *

Ամբողջ Սպարկերտում մօտ 14000 հայ են հաշւում, որոնցից 4000-ը կոտորուած, սառած և անյայտ է, 2000-ի չափ խոյս տուած, իսկ մնացածը բռնի կրօնափոխ եղած:

ՊՐՈՒՍԱՅԻ ԲԱԶԱՐ-ԳԻՒՂԷՆ

III

(ՎԵՐՋ)

—

Պրուսայի Բազարի նահանգի հայերը կարելի է ըսել թէ՝ շատ խաղաղիկ ժողովուրդ մ'էին. չնայելով որ միշտ կառավարական գող պաշտօնեաներէ և զիրենք շրջապատող մուհաճիր և չէրքէզ տարրերէն կանարգւէին, կը հարստահարուէին և կը կողոպտուէին: Շնորհիւ հայերու այս թոյլ և վախկոտ բնաւորութեանը, շատ ազդեցիկ տաճիկներ չնչին պատրւակներով սուտ զրպարտութիւններ ընելով հայերուն վրայ՝ ահագին հարստութիւն դիզեցին, անհաւատալի կաշառքներ առնելով անոնցմէ: Կեղտոտ զապթիաներն անգամ, սիրտ առնելով, երբ գիւղեր կերթային հարկ հաւաքելու, քմահաճ բռնաւորներ կը դառնային: Այծի միս չէին ուտեր, ոչխարի կուզէին:

Հիմա այս չափն ալ հերիք չեն սեպեր թուրք բաղդախնդիր պաշտօնեաներ, որոնք անօթի շուներ են. յեղափոխական շարժման պատրւակին տակ, կը հալածեն, կը կեղեքեն և կը շորթեն հայերը. և որպէսզի իրենց չար նպատակին մէջ աւելի առաջ երթան, երբեմն երբեմն լեռներու և ճամբաներու մէջ հայեր սպանել կուտան չէրքէզներուն և մուհաճիրներուն. ասով կուզեն հայերը յուսահատութեան մղել և այդ յուսահատութեամբ անոնց գերեզմանը պատրաստել: Ահա այսպիսի պաշտօնեաներ են „բարեխնամ“ սուլթանին երկիրը վարողները:

Այդ գիւղերու խոշոր աղաները, որոնք կը փայլին իրենց գծուծ շահախնդրութիւնով և նկարագրով, մեծապէս նպաստեցին թիւրքերուն անհրես լրբութեան. անոնց ամեն պահանջներուն, անիրաւութիւններուն առջև „էվէթ էֆէնտիմ“ ըսելով: Երբ ժողովուրդը կը խնդրէր, որ իրեն ցաւերը, բողոքները կուսակալին իմաց տրուին, հաստափոր աղաները սադի պէս տնտնալով վարպետութենով կը խաբխբէին ժողովուրդը կլեցնելով անոնց, „Ա՛խ, գէշ ժամանակներ են, ի՛նչ ընենք, համբերելու է“: Սակայն թիւրքերը անմախ հայ ջոջերուն պէս չէին խորհեր, անխնայ առաջ կը տանէին իրենց շահատակութիւնները և ջլատիչ հալածանքները խեղճ ժողովուրդ, սրտացաւ մէկը չունի, որ իր դժբախտութիւնը ներկայացնէ կուսակալին և թումբ դնէ Խալիլներու, վատ, մոլեռանդ գայմագամներու չարութեանց առջև:

Երբ այդ տխմար աղաները ժողովրդին շահերը չը պաշտպանելէ զատ, քաջալեր կըլլան Ռէձէպներու, Խալիլներու և սրիկայ գայմագամներու անօրէնութեանց և նենգութեանց, միայն իրենց հանգիստն ու ապահովութիւնը աչքի առաջ ունենալով, մի՞թէ տեղը չէ, որ սրբազան գնդակ մը երբեմն արդարութեան թարգման հանդիսանայ։

Բազարի լկտի գայմագամը իր ձեռքին տակ ունէր նաև յայտնի մատնիչ և սրիկայ անձնաւորութիւն մը՝ Արմէն Լուսինեան, որ բարոյական ստորութեան բոլոր կերպարանափոխութիւնները կրելէ յետոյ, արդար վրէժխնդրութեան ձեռքէն հալածական, Թիւրքերին ճիպպէին տակ կծկտած, կարծեմ Թիւրքցած ալ, դաւաճան խորհրդականն եղած էր միշտ գայմագամին և իր տարաբախտ ազգակիցներուն դէմ ակռայ կը կրճտեցնէր

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՏՈՒՉԱՍԱՐ ԳԻՒՂԷՆ

Քաղաքէն 6 ժամ հեռու 250 տնւոր զուտ հայաբնակ գիւղ մըն է Տուզասարը։ Հոկտ. 30-ի օրը արշալուսին, 3000-է աւելի չէրքէզներէ, Թիւրքերէ ու քիւրդերէ բաղկացած խուժանը՝ միացած կանոնաւոր զօրքերու հետ, վերի կողմէն յանկարծակի մոլեգնաբար գիւղին վրայ յարձակեցան։ Գիւղացիք սարսափահար Թողին տուներնին ու փախան մօտակայ բլուրը։ Յարձակողները նախ կրակի տուին տանիքներու վրայի փայտի դէզերը, ետքը կոտրտելով դռները՝ սկսան կողոպտել ինչ որ գտան տուներու մէջ։ Մինչև ժամը 10 այսպէս շարունակուեցաւ. 250 տուներէն հազիւ չ՚քանդուած 30 տուն մնաց։ Այդ միջոցին Գոզասարի գայմագամը իր հեծելազօրքով կուգայ, և ըսելով՝ որ բան չկայ՝ կստիպէ բլուրն ապաստանած հայերը, որ վար իջնեն։ Խեղճերը ճարահատ կը հնազանդին։ Յարձակման միջոցին գիւղը մնացողներէն 30 հոգի մեռած ու 70 ալ վիրաւորուած էին։

Եօթն օր ահ ու սարսափով կրկին յարձակումի մը կսպասէր։ Նոյեմ. 6-ին, կիւրակի օր, առտուան ժամը 2-ին, տեղի ունեցաւ այդ նոր յարձակումը. 6000 հեծեալ ու հետեւակ պաշիպօզուկներ ամեն տեսակ զէնքերով զինուած՝ չորս կողմէն գիւղը պաշարեցին ու բլուրի վրայէն սկսան անընդհատ հրացան արձակել։ Այդ ատեն պատահած աղիկտուր տեսարանը նկարագրել անհնար է։ Քանի մը անձեր գիւղին արևելակողմի Արծաթ քարին մէկ նեղ անցքէն հազիւ կրցան փախչել. քիչ վերջ Թշնամիներ այդ անցքն ալ գոցելով, սկսան անխնայ կոտորել գիւղացիները, առանց սեռի ու հասակի խտրութեան։ Ողջ մնացող կիները ժողուած ու տան մը մէջ փակած էին մինչև որ կողոպուտը վերջանար։ Մինչև իրիկուան ժամը 12 (ը. Թ.) այսպէս շարունակուեցաւ։ Քանի մը օր վերջը աւերակ գիւղը դարձողները ամեն կողմ զարհուրելի կերպով սպանուած դիակներով պատած գտան։ Այս մեռեալները 7 օր անթաղ մնալէ վերջ, կառավարական մարդիկ զանոնք սայլերով փոխադրեցին գերեզմանատան մէկ անկիւնը փորուած ահագին փոսը լեցնելու համար։ Վերջին կրօնական կարգն անգամ կատարելու չթողուցին և ցարդ չեն թողուր։

Թշուառութիւնը ծայրայեղ է. երանի մեռածներուն...

ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԻՍՏԱՆՈՍ ԳԻՒՂԷՆ

Իստանոսը Սեբաստիայէն 8 ժամ հեռու գիւղ մըն է։ Առտուն կանուխ 2000 անձերէ բաղկացած խուժանը առաջնորդութեամբ եարասարցի նշանաւոր աւազակապետ Պօշնակլիի և իր ընկեր Քէչմօտըլը եանգեցի Ապպաս Հօճայի տղայ՝ Ապտիւրրահմանին և իստանոսցի Իպրահիմ աղայի տղայ՝ Էմինին, յանկարծակի յարձակելով՝ սկսեցին անխնայ կոտորել անցէն ժողովուրդը։ Տուներէն ամեն բան տարին, նոյն իսկ արմտիքն ուրիշ ուտելեղէնները։ Այժմ ողջ մնացող Թշուառները յարդ կուտեն ու յարդի մէջ կը պառկին։ Գիւղին Տէր Ռէթէէոս քահանան լեռը տանելով՝ մորթեցին։ Յարձակողներէ 3 հոգի միայն մեռան, իսկ գիւղացիներէն 25 հոգի ու 7 ալ վիրաւորուեցան։

Մեռածները այր մարդեր են։

ԿԵՍԱՐԻԱ

11/23 փետրուար 96 Թ.

Կեսարիա դեռ սոսկումի ու սարսափի մէջ է։ Նոյեմ. 18-ի մեծ կոտորածէն ի վեր, ամեն մարդ քաշուած է իր տունը և ոչ ոք կը համարձակի դուրս ելնել։ Մեղադրելի չեն, երբ մտածենք այն արտակարգ մոլեռանդութիւնը ու ոխերիմ բնաւորութիւնը, որ յատկանիշն է այստեղի Թիւրքերուն։ Խեղճ հայերը այնքան սոսկալի տպաւորութիւն կրած են, որ դեռ իրենց աչքին առջև կը կարծեն տեսնել շաչիւնը այն սուրերուն, որոնք վայրենիներու ձեռքին մէջ, հարիւրաւոր անմեղ գլուխներ կը Թափէին։ Դեռ կը կարծեն լսել դժոխային ձայները այն գազաններուն, որոնք փողոցներու և մսավաճառներու խանութներու մէջ, մարդկային սրունգներ, Թեւեր ու գլուխներ ցիցերու վրայ անցուցած, -իրարու կը կանչէին վայրենի ծիծաղով մը՝ „Հասան, Հիւսէյն, մսի օխան 30 փարա, մէկ գլուխը 10 փարա, կառնե՞ս“։

Չկարծէք Թէ այս գազանները կշտացած են հայու արիւն խմելէ. երբէ՛ք։ Միշտ նորանոր պատճառներ կը փնտռեն, պատրւակներ կստեղծեն՝ յարձակելու և խպառ ընջելու մնացածներն ալ, որոնք կենդանի նահատակներ են իրենց կրած անտանելի տառապանքներով ու վշտերով։ Այսպէս երեք շաբաթ առաջ, գիշեր ժամանակ, Թիւրք մը, ո՛ գիտէ Թէ ինչ պատճառով, կըսպաննէ ուրիշ Թիւրք մը և արիւնը հայոց տուներուն վրայ քսելէ յետոյ, դիակը կը տանի իրենց գերեզմանը կը նետէ։ Առաւօտուն կը տեսնեն դիակը, ինչպէս նաև արիւնով ներկուած հայոց դռները։ Անմիջապէս

անհամար Թիւրքեր, սուրերով ու հրացաններով, բահերով ու մանգաղներով զինուած կը լեցւին ընդարձակ հրապարակ մը և „կեավուրլար միւսլիւմանը քեսմիշլէր“ ըսելով՝ կը պատրաստուէին նորէն յարձակում ընել Հայերուն վրայ։ Խեղճ Հայերը կսկսին դարձեալ գողալ լալ, տեսնելով իրենց կեանքին մօտալուտ վախճանը՝ քստմնելի միջոցներով։ Բարեբախտաբար այս միջոցին, այնպիսի անսպասելի կերպով մը երևան կելնէ ոճրին հեղինակը, որ այլևս կը պարտաւորին կենալ տեսնելով իրենց պատրւակին իսպառ անզօրութիւնը։

Դեռ հանդարտած չեն, սակայն այս անխիղճները անբաւական կը նկատեն եղածները ու մտադիր են նոր յարձակում մը ևս ընել պայրամին կամ անկէ ետքը։ Այս բանին համար երդւընցած են 800-ի չափ Թիւրքեր։ Եթէ կառավարութիւնը փոխելով՝ իր ընթացքը չքարեհաճի առջևն առնել և կամ ուրիշ միջոց մը արգելք չըլլայ իրենց արիւնայագ դիտաւորութեանց գործադրման, ապահովապէս հայ անունը պիտի ջնջւի հոս։

Թիւրք կառավարութիւնը, Մայր-եկեղեցւոյ վրայ իջած այն սոսկալի յարձակման մասին ինքզինքը արդարացնելու համար չկրնալով գտնել ուրիշ միջոց, հիմակ սկսած է սա յերիւրանքը տարածել, թէ ծպտեալ Հայեր եղած են պատճառը, որոնք գրգռելով Թիւրքերը, առաջնորդած են զանոնք մինչև հոն։ Է՛հ, ըսելիք չկայ, „քէսկին խըրըզ մալ սահիպինի աստըրըր (ճարպիկ գողը կախել կուտայ ինչքին տէրը)“, կըսէ իրենց առածը։

Գիւղերու վիճակն ալ խիստ անտանելի է։ Կիկիի բնակիչները, որոնց երեք անգամ կողոպտւիլը գրած էի նախորդ նամակովս, այսօր հարուստ թէ աղքատ, մերկ են բոլորովին և չոր հացի կարօտ, բնակարաննին բնակարան ըլլալու վիճակէն ելած է, որով խեղճերը պարտաւորած են իրենց մարմինը յարդանոցներու մէջ տաքցընելու։ Կոտորածէն յետոյ հարիւրապետ մը, զոր կառավարութիւնը որպէս թէ պահպանութեան համար, խրկած է զինուորներով մէկ տեղ, այլևայլ տանջանքներու կենթարկէ այս գիւղին երիտասարդները, պնդելով որ քովերնին գտնուած մարթինի հրացանները իրենց յանձնեն։

Նմանապէս երբ Նիրզէ գիւղին վրայ կը յարձակին շրջակայ Թիւրք գիւղացիներ, կառավարութիւնը յիսնապետի մը հրամանին ներքև, զինուորներ կը խրկէ „հայերը պաշտպանելու“ համար։ Ասոնք փոխանակ հալածելու կամ պատժելու աւարառուներն ու ոճրագործները, կսկսին մէկ կողմէն ծեծել ու նախատել Հայերը և միւս կողմէն ալ շատ մը դիւրութիւններ տալ Թիւրքերուն, աւարներն ու թալանները նոյն իսկ իրենց ձեռքով վերցնելով անոնց կռնակը։

Այս ամէնը բաւ չէր կարծես, կառավարութիւնը ուրիշ միջոց մըն ալ մտածեց խեղճ ժողովուրդը չարչըրկելու՝—կոտորածէն անմիջապէս յետոյ սկսան եկող տարւան տուրքերը հաւաքել, այս տարիէն բնաւ պահանջ չունենալով հանդերձ, չնայելով տառապանքին և ոչ արիւն արցունքին այս թշւառներուն, որոնք ամէն բան յափշտակել տւած ըլլալով՝ չոր հացի իսկ կը կարօտէին։ Որ մէկը թւենք։

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական սնդուկի մէջ ստացւած են.

Պ. Հակ 50 օսմ. ոսկի, Փայլակ 15-օսմ. ոսկի, Էվէլինա 300 օսմ. ոսկի. Անծանօթ 50 օսմ. ոսկի, Ատրուշան 20 օսմ. ոսկի, Մծբին 30 օսմ. ոսկի, Հայկաւանի Տիկին Հրանոյշ խմբէն 100 օսմ. ոսկի։ Աթինեցիր 1 օսմ. ոսկի։

Հիւսիսային Բևեռի հայ հասարակութիւնից ստացւած է 2500 ֆրանկ։

Պարս. Բաբ. քաղ. Ս. և Բ.-ի միջոցով 141 Թիւման, Հադրութցի 5 րուբլի։

Մի օրիորդից 3 րուբլի, Մի պարոնից 2 րուբ., Մի հօտից 4 րուբ. 40 կոպ., Խալիֆայից 30 րուբ.։

Պարս. Թ՛հ. քաղաքից Մ. Ս. և Ռշտունու միջոցով 200 Թիւման, Սարգ. քաղաքից՝ Գ. Մ. Ա. միջոցով.— Մի հայ 100 ղռան, Ե. Պ. 60 ղռ., Գծից 60 ղռ., Ոփ 40 ղռ., Մ. Ն. 30 ղռ., Մ. Ք. 40 ղռ., Յ. Ո. 50 ղռ., Յ. Զ. 50 ղռ., Ազգասէր 50 ղռ., Մարտ. 50 ղռ., Ապէր 20 ղռ., Ա. Մ. 50 ղռ., Մի հայ 20 ղռ., Ռ. 5 ղռ.։

Նշաբ. քաղաքից.—Արևելքցի 100 ղռ., Մ. Բ. 50 ղռ., Արցախեցի 20 ղռ., Կայծեր 20 ղռ., Յ. Ա. Ղ. 10 ղռ., Ա. Մ. 10 ղռ.։

Ուխտատեղի քաղաքից.—Աղքատ ազգասէր 100 ղռ., Մի վրացի 20 ղռ., Սիւնեցի 25 ղռ., Ա. Ս. 15 ղռ., Յ. Մ. Ա. 10 ղռ.։

Սիւնիք քաղաքից.—Խոսրովի խմբից $1^1/_2$ մէճիտ, Ազատութիւն 1 մէճիտ, Բ. 1 մէճիտ, Բոժոժիք $^1/_2$ մէճիտ, Ն. Ֆ. $^1/_4$ մէճիտ, Դատաւոր $^1/_2$ մէճիտ, Նիզակ 2 մէճիտ, Ոփ 1 մէճիտ, Խըպըլիք և Ալք 1 մէճիտ, Առիւծ 1 մէճիտ, Սուր $^1/_2$ մէճիտ։

Ամերիկ. Շիկագօ.—Դատաւորից 2 դօլլար։

Արշակաւան քաղաքի Կեդ. սնդ. մէջ ստացւած են.

Մուրադեան խ. 60 դհ., Փետուր խ. 80 դհ., Ձէթ խ. 25 դհ., Հրահատ խ. 20 դհ., Անգղ. խ. 20 դհ., Վոյր 20 դհ., Շաքէ խ. 345 դհ., Մասիս 40 դհ., Ռուբինեան խ. 100 դհ., Գինարբ խ. 35 դհ., Արշակեան խ. 25 դհ., Արծիւ խ. 50 դհ., Կայծակ, Վահագըն, Մըջիւն, Մունջ, Մելան, Երկաթ, Պայծառ, Կշիռ, Մանուկ և Պատգամ 10-ական դհ., Ծածուկ 10 դհ., Ասպատակ խ. 20 դհ., Բանալի 30 դհ., Վահանեան խ. 40 դհ., Վարդանոյշ 40 դհ., Դրիչ ոսկի 108 դհ., Մեծ 10 դհ., Երկայն 10 դհ.։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան և նւիրատւութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

L. Boole, 19, Russell Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան։

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ԱԼԵՔՍԻՍ ՄԱԼՕՅԵԱՆ

Կարնից մեզ հաղորդում են մեր ընկեր, ալէքսանդրօպոլի նախկին ուսուցիչ ԱԼԵՔՍԻՍ ՄԱԼՕՅԵԱՆԻ ցաւալի մահուան լուրը։

Հանգուցեալը գաղտնի ճանապարհով ռուս-տաճկական սահմանագլուխն անցնելու ժամանակ բքի է բռնուում, դիշերային մթութեան պատճառով մի քանի անգամ ջրի մէջ ընկնում, որից և սառչում է։

Մալոյեանի մահը զգալի կորուստ է մեզ համար, մանաւանդ մի այնպիսի ժամանակ, երբ մենք այնքան պէտք ունէինք նրա ուժին ու ընդունակութիւններին։ Այդ համեստ, քիչ խոսող, ոչ մի վտանգից խոյս չը տուող աշնիւ երիտասարդի յիշատակը միշտ վառ կը մնայ ոչ միայն իւր մօտ ընկերների, այլ և այն բազմաթիւ արհեստաւորների սրտերում, որոնց շրջանում նա միշտ գործում էր։

Մալոյեանին Տաճկաստանում այլ մահ էր սպասում։

ԱՀԱԲԵԿԻԶՆԵՐԻ ԿՈՒԻԼ

Ապրիլ 16/28-ին, երեքշաբթի օրը, Կ. Պոլսում, Դաշնակցական ահաբեկիչների խմբի և ոստիկանութեան մէջ ընդհարում է տեղի ունեցել Ղալաթիայի Քարաքէօյ հրապարակի վրայ։ Ոստիկաններից մէկը տեղն ու տեղը սպանուած է, միւսները վիրաւորուած։ Սպանողն ու վիրաւորողներն ազատ են։ Ձերբակալուած են երկու ուրիշ հոգի։

Մանրամասնութիւնները հետևեալ համարում։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԵՅՈՒԿ

—

Ո՞ւմ չպէտք է վրդովի մեր ներկայ դրութիւնը. ո՞վ կարող է սառնասիրտ կերպով տանել այն բոլորը, ինչ կատարւել և կատարւում է մեր հայրենիքում. ո՞վ կարող է արդար զայրոյթ, խորին ատելութիւն, գարշանք չզգալ դէպի սուլթանի բռնակալութիւնը, որն աջ ու ձախ արեան գետեր է հոսեցնում, որը մորթում, կոտորում, աւերում, թալանում է. և ընդհակառակը, ո՞վ կարող է չհամակրել, չարտայայտել իւր բուռն սէրը, ջերմ համակրանքը, ցաւակցութիւնը դէպի այն ժողովուրդը, որն այսօր իւր մարդկային իրաւունքների համար ոտքի է կանգնել, բարձրաձայն բողոքում, պահանջներ է դնում, կռւում, արեան մէջ է տապալտկւում։

Մեր դրութիւնն անտանելի է, հայ ժողովուրդը դարերի պայմանների մէջ է ապրում, նա յուսահատական քայլեր է անում իւր դրութիւնից ազատուելու։ Այս բանը ոչ ոքի համար ծածուկ չէ։ Այս է պատճառը, որ ամեն տեսակ տարրեր, իւրաքանչիւրն իւր առանձին միտումներով, ասպարէզ էին եկել իբր հայ ժողովրդի պաշտպաններ կամ համակրողներ։ Բայց երբ սուլթանը հայ ժողովրդի դէմ հանեց իւր զօրութիւնը և ամբողջ երկիրը լցուեց դիակներով ու աւերակներով, այն ժամանակ հայ ժողովուրդն իւր աչքով տեսաւ ու ճանաչեց իւր „պաշտպաններին“, որոնք փութացին ապահով տեղ գտնել իրենց համար։ Եւրոպական դիպլոմատիան, որ ամենից շատ էր աղմուկ հանում և „վրդովւում“, մինչև իսկ սպառնալիքներ արձակում, առաջինը յետ քաշւեց, ազատ ասպարէզ տալով սուլթանին գլուխ բերել իւր „բարեկորգումները“։ Երեսը դարձրեց Ռուսաստանը՝ „արևելքի քրիստոնեաներին հովանաւորողը“ և ոչ միայն երես դարձրեց մեզանից, այլև չամաչեց պարծելու իւր բարեկամական ձեռքը հրեշ գազանին։ Եւ այն ժամանակ, երբ ամբողջ Տաճկահայաստանում արեան գետակներ էին հոսում, երբ զոհերի լաց ու կոծը խառնւած վայրենի ցնծական աղաղակների հետ երկինք էին բռնել,

փափկասիրտ Նիկոլայ II-ը առանց խղճի խայթ զգալու, ընդունեց սուլթանի արիւնաթաթախ ձեռքով մատուցած պարգևները, պարգևներ, որ դուրս էին կորզած արիւնաքամ հայ ժողովրդի պատառ-պատառ եղած կրծքից։ Երես դարձրեց մեզանից Ֆրանսիան, „ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն" հռչակող Ֆրանսիան, որն այժմ պոռնիկ կնոջ նման ընկել է հիւսիսային արջի գրկի մէջ։ Երես դարձրեց Անգլիան, որը նկատելով իր վտանգաւոր դրութիւնը, բաւականացաւ հեռուից մի երկու անգամ սուլթանի վրայ հաչելով և հեռու տեղերում ծովային ցոյցեր անելով...

Սակայն, միմիայն շահասիրական միտումներով ապարէզ եկած դիպլոմատների, կրօնական նպատակներ ունեցող եպիսկոպոսների, միսիոնարների և իրենց առևտրական շահերի տեսակէտից նայող հաստափոր բուրժուաների, բոլոր մեր արտաքին „բարեկամների" բարձրացրած աղմկալից կոչերի միջից մենք լսում ենք և այլ ձայներ. դրանք բոլոր երկրներում ցրուած անարատ ուղեղների, զգայուն հոգիների, մատաղ սրտերի դէպի մեր բազմաչարչար ժողովուրդն ուղղած ջերմ համակրանքն ու անկեղծ սէրն է։ Դրանք են, որ իրենց անկեղծութեամբ մեզ խրախուսում են և բարոյական ոյժ տալիս. դրանք են, որ կազմում են հասարակական անաչառ կարծիքը և այդպիսով որոշ չափով ազդում իրենց կառավարութեան բռնած դիրքի վրայ։ Աւելի պարզ կերպով այդ ուղղութիւնն արտայայտւում է զանազան երկրների յեղափոխական երիտասարդութեանց մէջ, որոնց մեզ ուղղած համակրական ուղերձներից մի քանիսը ընթերցողը կարող է գտնել ներկայ համարում։

Ռուս ուսանող երիտասարդութեան քաջալերական խօսքերը, որն իր ուսերի վրայ է կրում բռնակալութեան ծանր լուծը և նոյնպէս դիմում է դէպի ազատութիւն, մեզ սիրտ են տալիս մեր անհաւասար կռւի մէջ։ Մենք գտնում ենք նոյն քաջալերութիւնը և լեհ երիտասարդութեան կողմից։ Թէ լեհը և թէ լեհուհին մեզ աւելի լաւ կարող են հասկանալ, իրենք էլ գտնւելով համարեա թէ մեր դրութեան մէջ։ Նրանք էլ զրկւած լինելով քաղաքական ազատութիւնից, կռւում են նոյնպէս բռնակալութեան դէմ, որը նրանց ստիպում է հրաժարւել իրենց պատմական անցեալից։ Քաջալերական ուղերձներ ենք ստանում բուլղար երիտասարդութիւնից, Նանսիի ֆրանսիական ուսանողութիւնից և այլն և այլն։ Մեզանից իւրաքանչիւրը կը գտնի նրանց արտայայտած համակրանքների մէջ իր բարոյական նեցուկը, որովհետև դրանք բղխում են մաքուր, անկաշառ, անկեղծ մարդկային զգացումներից։

Մեր երիտասարդութիւնը կը ոգևորւի ռուս երկսեռ երիտասարդութեան օրինակով, որն արտադրել է իր միջից յեղափոխական բարձր, օրինակելի սիպարներ, որը տասնեակ տարիների ընթացքում տւել է հազարաւոր երիտասարդ զոհեր, բայց և որը, չնայելով իր կրած սոսկալի պարտութեան, այսօր նորից գլուխ է բարձրացնում բռնակալութեան դէմ, օգտւելով անցեալների դառը փորձերից։ Մեր երիտասարդութիւնը կոգևորւի լեհացիների օրինակով, որոնք քանիցս անգամ ապստամբւել են իրենց ճնշող լծի դէմ, ամեն անգամ սոսկալի ջարդ են կրել, բայց և այնպէս չեն ընկճւել և շարունակում են իրենց աշխատաւոր դասակարգի ազատութեան գործը։ Մեր սորկացած մայրերը, քոյրերը, որոնց սրտաճմլիկ աղաղակները արձագանք են գտնում լեհ և ռուս կանանց սրտի խորքերում, կը հետևեն իրենց քոյրերի օրինակին. նրանք կը դրդեն իրենց սիրելիներին պատերազմի դաշտը դուրս գալ, դէմ առ դէմ կը կանգնեն թշնամու առաջ և սեփական արիւնով ազատութիւնը կը գնեն։

Ունենալով այդպիսի բարոյական նեցուկ, ոգևորւելով դրանց անվհատ գործունէութեամբ, սիրտ առած մեր վիճակակից ընկերների խրախուսանքից, մենք աւելի մեծ ուժով կը դիմենք դէպի յեղափոխութիւնը, որը միակ միջոցն է մեր թէ բարոյական և թէ ֆիզիքական տանջանքներին վերջ տալու։ Գնա՛նք մենք մեր եղբայրների հետքերով, որոնք ընկել են պատերազմի դաշտում, մենք չը պղծենք նրանց մաքուր յիշատակը։

Մենք ուժեղ ենք, մեր կողմն են նրանք, ում կուրծքը չի բորբոսնել, ում մէջ դեռ կենդանի է ազատութեան սէրը, ով կռւում է և արիւն թափում իր եղբայրների ազատութեան համար։

Մեզ համար չեն կարող բարոյական նեցուկ լինել ոչ մեր հարցի վրայ իրենց ապրանքների սպառման տեսակէտից նայող եւրոպացի հաստափոր պաշտպանները, ոչ քրիստոնէական վարդապետութեան „ճշմարտութիւնները" քարոզելու համար հող փնտրող կաթոլիկ և բողոքական միսսիոնարները և ոչ եւրոպական պետութիւնները, որոնք իրենք իրենց ժողովրդի վերաբերմամբ մարմնացած կեղեքիչներ են.

Ձեզ ենք մեկնում մեր ձեռքը, յեղափոխական ընկերներ, ձեզ հետ միասին մենք կընթանանք մեր ընդհանուր թշնամիների դէմ։ Առանձնապէս կռւելով՝ իւրաքանչիւրը իր անմիջական թշնամու դէմ՝ մենք կռւում ենք մեր ընդհանուր նպատակի՝ աշխատաւոր դասի ազատութեան համար։ Ձեր յաղթութիւնը մեր յաղթութիւնն է, մեր պարտութիւնը ձերն է։ Միանանք բարոյապէս և կրկնակի եռանդով դիմենք անվախ, համարձակ դէպի մեր թշնամիները և վստահ մեր բարոյական յաղթութեան վրայ, առաջ տանենք մեր արդար կռիւը։

Կորչի՛ն բոլոր բռնակալները, կեցցէ՛ ժողովուրդը, կեցցէ՛ յեղափոխական երիտասարդութիւնը։

Օգ. [illegible]

ՄԵՐ ՀԱՅ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

I

Տաճկական արիւնոտ հարուածները, ուղղած հայերին, դարձրին իրենց վրայ ամբողջ քաղաքակրթուած աշխարհի ուշադրութիւնը։ Ճնշումն ու ամենակոպիտ կամայականութիւնը, որոնք ծածկուած էին Եւրոպայի աչքից կեղծ ու պատիր օրէքների վարագուրի տակ, վերջին դէպքերի ժամանակ մերկանալով իրենց բոլոր ճշմարտութիւններով, գրգռեցին մինչև իսկ Եւրոպայի ամենայետադէմ դասակարգերի զայրոյթը։ Քաղաքակիրթ ազգերը, ի դիմաց իրենց ներկայացուցիչների, բողոք յայտնեցին տաճիկ կառավարութեան արարքների դէմ և այդ բողոքը ոչ թէ միայն տնտեսական շահերի ու միջազգային քաղաքական միտումների թելադրութիւնն էր, այլև հասարակական կարծիքի արտայայտութիւնը, առանց դասակարգերի խտրութեան։ Պաշտօնական Ռուսաստանը, իրեն հարկադրուած զգալով միանալու միւս պետութիւնների հետ, այնուամենայնիւ չզլացաւ իւր կիսապաշտօնական օրգանների միջոցով թափել հայերի գլխին կեղտոտ ինսինուացիաներ ու ծաղրանքներ, զգալ տալով՝ թէ որի կողմն է իւր համակրանքը։

Հարկ չենք համարում հաւատացնել, որ մենք, ռուս երիտասարդ ուսանողներս, ոչ մի կապ չունենք այն ընթացքի հետ, որ բռնել են դէպի ձեր գործը մեր ընդհանուր „թշնամիները“, ազատութեան և առաջադիմութեան թշնամիները, որոնց համար կառավարութիւնը մի զէնք է, իսկ ամբողջ ժողովուրդը՝ բացառեալ իրենց դասակարգի անձնաւորութիւնները՝ շահագործման նիւթ։

Մեր բոլոր համակրանքը ձեր կողմն է՝ յանուն ազատութեան կուռողների կողմը։ Մեր զգացումները այլապէս էլ չեն կարող լինել, քանի որ մենք ևս կրում ենք նոյնպէս բռնակալութեան ճնշումը, թէև ոչ այն սարսափելի ձևով, ինչպէս վերջին ժամանակները գործ դրեց ձեր եղբայրների գլխին։

Մենք չենք համարձակւում ասել այս խօսքերը ի դիմաց ամբողջ ռուս երիտասարդ ուսանողների, բայց մենք հաւատացած ենք, որ մեր խօսքերի տակ կստորագրեն բոլոր այն երիտասարդները, որոնք դուրս են եկել բանւորական դասակարգից, ինչպէս և կը միանան մեզ հետ մնացեալ մասի առաջադիմական տարրերը։

Ընկերներ, մենք անկեղծ սրտով յաջողութիւն ենք ցանկանում ձեր ազգային գործին, որը միայն սկիզբն է և առհաւատչեան ապագայ ժողովրդական գործունէութեան։ Ներկայ րոպէին, դժբախտաբար, մենք մեր համակրանքը միայն սրանով կարող ենք արտայայտել։ Ձեզ յայտնի է, որ մեր հայրենիքում ևս եռ է գալիս խուլ կռիւ, որը նորանոր զոհեր է պահանջում որ և կը կլանի մեր բոլոր ուժերը։ Բայց մենք, այժմ իսկ պատրաստ ենք սիրով ողջունել այն րոպէն, երբ ձեռք-ձեռքի կը տան ուսանող երիտասարդութիւնները ազատ Հայաստանի և ազատ Ռուսաստանի։

ՏԵԽՆԻԿ ՌՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ

II

Տաճկահայերի կրած տառապանքները վաղուց ի վեր արձագանք էին գտնում մեր սրտերում։ Տաճիկ կառավարութեան ձեռք առած բարբարոսական միջոցները, դժբախտ ժողովրդի յուսահատական ճիգերը, այս բոլորը չափից դուրս պարզ և ակնյայտնի կերպով նկարագրում են մեզ մեր սեփական դրութեան պատկերը և մեր անկախութեան համար վարած կռուի պատմութիւնը։

Ըմբռնելով Հայկական հարցը իր ամբողջ էութեամբ, մենք անկեղծ սրտով համակրում ենք նրան։

Ձեր հաղորդածը՝ որ մեծ պետութիւնների միջամտութիւնը ոչ մի ազդեցութիւն չունեցաւ տաճիկ տիրապետութեան լծի տակ հեծող ձեր հայրենակիցների դրութեան բարւոքման վրայ, մեզ շատ վշտացրեց, բայց չզարմացրեց։ Աւելորդ է որ և է բան սպասել պետութիւններից։ Ի՞նչը կարող է աւելի լաւ լուսաբանել այդ դրութիւնը, եթէ ոչ մեր սեփական կռուի պատմութիւնը։ Մեծ պետութիւնները գործ ունեն միայն ուժեղների հետ, իսկ եթէ թոյլերին նրանք պաշտպանում են, այդ անում են այն ժամանակ, երբ հարկաւոր է լինում իրենց վտանգաւոր մրցակցին տապալել։

Ի նկատի առնելով մեր տխուր, բայց պերճախօս վիճակը, մենք ի բոլոր սրտէ ցանկանում ենք հայերին զօրանալ, ամրանալ ներկայ դժբախտութեանց մէջ, նորից հաւաքել իրենց ուժերը, որպէսզի ապագայում աջողութեամբ կռուեն իրենց մարդկային և ժողովրդային իրաւունքների համար։

Ձեր վերաբերումը դէպի ձեր հայրենակիցների դրժբախտութիւնները պարզ ապացուցանում է, որ պետական սահմանները երբէք չեն կարող կամայականութեամբ բաժանել ժողովուրդը մասերի և թուլացնել ժողովրդական ոգին։

Թող ձեր ժողովրդի ներկայ տառապանքները դառնան նրա ապագայ ուժի աղբիւրը։ Թող զարգանայ նրա մէջ բողոքի ոգին ի դէմ բոլոր լուծերի՝ քաղաքական, հասարակական կամ տնտեսական։

ՄՈՍԿՎԱՅԻ ԼԵՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

III

Տաճկահայերի կրած տառապանքները զարթեցրին մեր մէջ ջերմ համակրանք դէպի ձեզ։ Որպէս մարդիկ, մենք համակրում ենք ձեզ, որոնց քաղաքական դրութիւնը զրկում է համարեա թէ բոլոր մարդկային իրաւունքներից։ Որպէս լեհուհիք՝ համակրում ենք ձեզ՝ այն ազգի ներկայացուցիչներին, որը կռւում է յանուն անկախութեան, ազգի, որը չկարողանալով կրել ստրկութեան շղթաները, ճիգ է թափում թօթափել նրանց։ Որպէս կանայք, համակրում ենք բոլոր հայ կանանց՝ ձեր մայրերին, քոյրերին, ձեր կանանց ու աղջկերանց, որոնք բոլորովին անպաշտպան, գտնւում են մի երկրում, ուր թագաւորում է լիակատար կամայականութիւնը։ Որպէս զաւակներ մի ստրկացրած երկրի, որը նոյնպէս բողոքում է իւր դրութեան դէմ, մենք միանգամայն համակրում ենք ձեզ։

Թող կորչին բոլոր բռնակալները, կեցցէ՛ ազատութիւնը, կեցցէ՛ բոլոր ազատասէր ժողովուրդների միութիւնը՝ ընդհանուր ուժերով բռնակալութեան դէմ կռուելու համար։

ԼԵՀՈՒՀԻՆԵՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ

Տեղի սղութեան պատճառով չենք կարող զետեղել՝ Նանսիի Փրանսիական ուսանողական խմբի և բուլղար երիտասարդութեան համակրական ուղերձները։ Բացի սրանցից համակրանք են յայտնել հ ի ն գ այլ ռուս ուսանողական ընկերութիւններ, որոնցից մէկի (Կովկասեան) ուղերձը, իւր մասնաւոր նշանակութեան պատճառով կը հրատարակենք հետևեալ համարում։

ՆԱՄԱԿ ՊՈԼՍԻՑ

—

Տեղական թերթերու մէջ, իբրև պաշտօնական լուր, հրատարակւեցաւ թէ՝ բարձրագոյն ի ր ա դ է ո վ յանձնախումբ մը կազմւած է, որ պաշտօն ունի հանգանակութիւն ընելու, և ձեռք բերւած գումարովը շինել և նորոգել այն մզկիթները, որ քանդւած ու վնասւած էին՝ վերջերս Անատոլի մէջ տեղի ունեցած անկարգութիւններէն։

Այս պարզ ու ըստ երևոյթին անմեղ յայտարարութիւնը, սուլթանական խորամանկութեամբ շինւած ու կարկտնւած, թիւրք ֆանատիկոսութեան մի նոր հրաւէր էր։ Ի՞նչ ըսել է քանդւած ու վնասւած մզկիթներ. ո՞րտեղ ենատոնք, ո՞ր աստղի կամ ո՞ր երկնքի տակ։ Սուլթանը շատ լաւ գիտէ, որ իր հրամանին համաձայն՝ քանդւածները, հրձիգւածները միմիայն հայոց սրբարաններն էին. բայց որպէս զի մէկ կողմէ Եւրոպայի դիւանագիտութեան քթին զարնէ հայոց երեսին նետւած սուտ ամբաստանութիւն մը և միւս կողմէ՝ հասկացնէ թիւրքերուն, որ իբր թէ հայերը, իբրև հեղինակ Անատոլիայի անկարգութեանց, թիւրքերուն աղօթարաններն իսկ քանդած ու վնասած են։

Հայոց պատրիարքը, որ սուր աչքերով ամեն փըսփսունքներն ալ մաղէ կանցնէ, առանց դժւարութեան ըմբռնելով այդ մեքենայութեան նոր խաղը, իսկոյն թ ա գ ր ի ր մը կը գրէ Դռան թէ՝ „Այդ պաշտօնական ծանուցումը բոլորովին սխալ է։ Քանդւածներն ու վնասւածները հայոց սրբարաններն են, թւով 400-էն աւելի. իսկ մզկիթ ըլլալով, մէկ հատ միայն կայ, Արաբկիրի մէջ մզկիթ մը, որ հայոց թաղին կից ըլլալով, այրած է կրակի տրւած հայոց տուներուն հետ“։ Սակայն պատրիարքարանի թ ա գ ր ի ր ը ուժեղ բողոքի ձայն մըն է, որ խեղդւած կը մնայ միմիայն Դռան գրասենեակներուն մէջ. իսկ թերթերու մէջ հրատարակութիւն մը տիեզերական աղաւոր ձայն մըն է, որ հիւսիսի հովէն աւելի ուժով, արձակ կը վազէ օդին մէջ ու կը հասնի ամեն տեղ։

*
* *

Տրապիզոնի լազերն ու չէրքէզները օրեր առաջ քաղաքը խռնւած, վերջին հարւած մը տալու կը պատրաստւին եղեր՝ ի հաճոյս սուլթանին. մանաւանդ նոր թալանի գրգիռ մը կը խանձէ Ահմէդի ոգին, երբ կը տեսնէ՝ որ իր դրացի Հիւսէյէնը, այն զ ի պ ի ր ի հէրիֆը, նախորդ տարի իրեն պէս մարդ մըն էր՝ վաղւանը մտածող, իսկ սեպտեմբերի՝ բարեբաղդ 25-էն ատին նախանձելի վիճակ մը ունի, ոսկին գրպանին մէջ առատ, ամենուն ակնածելի։ Եւ ինքը տակաւին աղքի մարդն է՝ գրպանները ծակ, բերանը հովին։ Սուլթանի շնորհիւ՝ կեավուրներու նոր ջարդ մը կը սարքեն և ինքն ալ ուրիշներու պէս կը հարստանայ։

Ռուս և յոյն հիւպատոսները կը տեղեկագրեն իրենց դեսպաններուն, որոնք դիմում կընեն Դռան աղդու լեզւով, և պաշտօնական իրարանցումէ մը ետքը սաստիկ հրաման կը ղրկւի, զգուշանալ ո՛ր և է անկարգութենէ։ Ու ոչ մէկ անկարգութիւն. լազն ու չէրքէզը խոժոռելով՝ ակռայ կրճտելով կը քաշւին իրենց որջերը՝ նոր օրերու սպասելով։

*
* *

Մեզ հետաքրքրող լուր մը շրջեցաւ ընկերութեանց մէջ։ Կըսւի թէ՝ երբ Ֆէրդինանդ իշխանը Ռոպէրթ վարժարանը կայցելէ, հայ ուսանողները, արդէն իսկ վշտացած՝ որ մեր պատրիարքարանի պատւիրակութիւնը անձամբ չէր ընդունած իշխանը, չեն մասնակցեր ընդունելութեան համակրական ցոյցին և նոյն իսկ բուլգար ուսանողներ ալ դժգոհ մնացած են իրենց իշխանին այդ կերպ վարմունքէն։ Եթէ լսւածը սխալ չէ, ինչ որ հաւանական կը թւի, բուլգար ուսանողները գրով մը իրենց դժգոհութիւնը յայտնած են իշխանին, թէ կը ցաւին, որ Ֆէրդինանդ չէր գիտցած համակրանքով վերաբերւել ազգի մը, որուն վիճակը ունեցած էր Բուլգարիան 18-20 տարի առաջ։ Ենթադրելով, որ այս լսւածները ճշգրիտ իրողութիւններ են, կը ծափենք Ռոպէրթի ուսանողութիւնը։

Նոր ազատագրւած ազգի մը իշխանը, Ֆէրդինանդ, չկրցաւ համակրանքով վերաբերւել ազգի մը, որ Բուլգարիոյ անցուցած պատմութեան կ ռ ի զ ի ս ն ե ր է ն կանցնի՝ կուրծքը վիրաւոր, հևալով, սոված, բայց կենդանութեան տարրերով լեցուն...

*
* *

Գաղան Համիդը Անգլիական դիւանագիտութեան վերջին յաջողութենէն աճաբեկած, շատ նման սկսած է քծնիլ ու ստորանալ։ Վերջին անգամ ընդունելութեանը՝ մինչև դուռը դեսպան Սըր-Ֆիլիփ-Կըրրին ընդառաջ գացած է... Այս բացառիկ շնորհը կընէ այն անձին, որ քանի մ՚ամիս առաջ ժամերով սպասցուց ու հիւանդացուց պաղ սենեկի մը մէջ։

Նոյն պատճառներով „Նորին վեհափառութիւնը“ բարեհաճեր է Իզմիրլեան պատրիարքին ալ հաշտ աչքով նայիլ, մօտենալ ու գրաւել կուզէ։ Քանի օր է որ կառավարութիւնը պաշտօնական գրութիւնները կուղղէ Իզմիրլեանի անունին, մինչդեռ առաջ կը գրւէր պատրիարքարանի անունին։ Այժմ կուզէ Իզմիրլեանը իբրև պատրիարք ճանչնալ. գուցէ անիկայ թակարդ մըն է, որ կը լարւի իրեն։ ամեն պարագայի մէջ այնքան հազարներու կոտորածէն վերջ՝ երբեք պէտք չէ Իզմիրլեան հաշտ աչքերով սուլթանին նայի։ Այնքան տառապանքներու արիութեամբ դիմադրող անձը անշուշտ այս պարագային ալ պիտի ցցնէ իր կամքի բարոյական մեծ ոյժը։

ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ

—

$^{12}/_{24}$ մարտ 96 թ.

Անիշխանութիւնը կատարելապէս տիրում է Վանում: Զօրքն ու զափթիան, մոլլքն ու բաշիբօզուկը ամենայն համարձակութեամբ սպանում, թալանում և վիրաւորում են նոյն իսկ քաղաքի մէջ ու եզերքին։ Մարտ 2-ին քաղաքից 5 րոպէ հեռու թիւրքերը գնդակահար արին Անովանից ռէսին։ Մարտ 8-ին, Վանից կէս ժամ հեռու Խաչիկին ծանր վիրաւորեցին ու Թօփուզեանի քիթը կտրեցին։ Մարտ 9-ին Ավանուց ճանապարհի վրայ 2 հոգու զօրքերը կողոպտեցին ու ծանր վիրաւորեցին։ Մարտ 9-ին Այգեստանի Արարք թաղում Չըթըղեան Արշակից փոլիսը մի քանի զափթիաներով կամենում է րէվոլվէրը խլել. երիտասարդը դիմադրում է։ Անմիջապէս րէվոլվէրով ու սուրերով թափւում են նրա վրայ։ Երիտասարդը ընկնում է. չի ապրիլ, գլուխը վտանգաւոր կերպով ճղւած է։ Այս անիշխանութեան առաջացնողներն են լկտի սուլթանի լակոտները, „բարենորոգիչ“ փաշաները, մոլլաներն ու Ֆէրիգը։ Իսկ Վանի վալին՝ Նազըմ փաշան բաւական խելացի ու քաղաքագէտ է և մի կերպ կարողանում է գլուխ դուրս բերել այս անիշխանութեան միջից։ Սակայն հարեմի լակոտը հրամայելուն անմիջապէս հայերին սրի պիտի քաշէ։ Հայերի դրութիւնը աննկարագրելի է, գարունը բացւելուն պէս գաղթականութեան հոսանքը պիտի ըսկսւի. յեղափոխականներին մնացած է դիմադրել բոլոր ուժով այդ հոսանքին և շտապել ինչ որ հարկ է անել։

Եւ դեռ գտնւում են անմիտներ, որոնք պահանջում են դադարեցնել յեղափոխական շարժումը։ Կարծես՝ եթէ մի հրաշքով յեղափոխական շարժումը կանգ առաւ, զօրքերն ու քրդերը այլևս մարդ չեն վիրաւորիլ, չեն սպանիլ, գիւղեր չեն թալանիլ։

Որչափ հայերը տնտեսապէս ընկած են, նոյնչափ դեռ աւելի քանդւած է թիւրք կառավարութիւնը։ Դրան ապացոյց, որ զօրապետները 6-7 ամսականը չեն ստացած. այս բայրամին $4^1/_2$ ղուրուշ ամսական զօրապետների, 40 փարա զափթիաներին տւեցին իբր ամսական, ամբողջ զօրքը խօսք մէկ արաւ և բայրամի օրը ոչ հաց և ոչ կերակուր ընդունեց, որովհետև պահւում են վերջին աստիճանի խեղճութեան մէջ։ Մարտ 10-ին զօրանոցից 25 հոգի փախան։ Հիւանդանոցում դրամի պակասութիւնից և լաւ չխնամւելուց միջին թըւով օրական 12 զինւոր է մեռնում. տիֆ կայ։ Կառավարութիւնը պարսկական սահմանագլուխները պիտի շըղթայէ, դրամ չունի։ Նազըմ փաշան դիմեց երկու հարուստի խոշոր գումար ստանալու։ Դրանցից մինը Կալպ փաշան էր, իսկ միւսը հայոց նշանաւոր դաւաճան Յարութիւն Թարզիբաշեան. երկուսն էլ մերժեցին։ Նշանակում է թիւրք վարչութիւնը մազից է կախւած, նըրան քայքայելու համար մի զօրեղ հարւած ևս պէտք է։ Վանը արդէն շղթայւած է։ Այգեստանը, ուր կեդրոնացած են հայերը, 22 պահականոց ունի. թիւը տակւին պիտի աւելնայ 30 մինչև 35, որով պաշարւած կը լինի քաղաքի եզերքները և գլխաւոր փողոցները։ Երկու ամսից աւել է հարեմի լակոտի „բարենորոգիչ“ փաշաները նստած են Վան, ձեռքերը ծալած ու թըրքական դաւեր են մտածում։ Ողորմելի միամիտներ և մի քանի դաւաճաններ քիչ էր մնում ընդունում էին դրանց առաջարկած մեծ բարենորոգումները. այն է գըրել 20 փոլիս և 20 զափթիա հայերից և հանրագիր տալ։ Սակայն յեղափոխականների սարսափը այդ ողորմելիներին անմիջապէս ետ կանգնեցրեց։

Ոստիկան-հիւպատոս։—Անգլիական հին Մ. Հալվարդ հիւպատոսը միանգամայն համակրելի, ազատամիտ մարդ էր։ Իսկ նորը, որ դեռ 3 ամիս է եկած է, Աստւած հեռու պահի, պատկանում է խաւարամիտ Սօլսբէրիի բանակին։ Պոլսում նշանւեցաւ իշխանագործի նշանով և այստեղ կատարեալ թիւրք ոստիկանի դեր է կատարում։ Վան մտնելուն պէս ձեռները շրջան էր կազմում և մատները իրար կպցնելով ասում՝ „Հայերին պիտի հաշտեցնեմ սուլթանի հետ“։ Այդ դեռ բաւական չէ։ Մի քանի օր առաջ կանչեց հրապարակի վըրայ՝ ջարդից, թալանից խոյս տւած ու քաղաք ապաստանած հազարաւոր հայ գիւղացիներից գլխաւորներին և պահանջում էր բռնի՝ վերադառնալ իրենց գաւառները, ուր ոչ հայ կայ, ոչ տուն, ոչ կին, զաւակ, այլ գազան քիւրդեր։ Գլխաւորները չհամաձայնեցան հեռանալ։ Այդ ողորմելին խօսքով ապահովութիւն, անդորրութիւն է խոստանում, ինչպէս Անգլիան 19 տարի շարունակ, և թէ զօրք զափթիա կուղարկէ նրանց հետ։ Բօղազ-Քեասանի ռէս Թումօն շատ լաւ պատասխանեց նրան. „Երբ մեր գիւղերն աւերում, մեր կանայք փախցնում էին, զօրքն ու զափթիան մեզ մօտ էին և անել տւողը նրանք էին։ Մենք երբէ՛ք հաւատք չունենք կառավարութեան վըրայ“։ Ոստիկան-հիւպատոսը սկսում է գովել պռնիկ Շաքիր փաշայի „բարենորոգիչ“ փաշաներին և այսպիսով համոզել, սակայն անհետևանք։ Այսուհետ սպառնում է նրանց բռնի խրկել։ Բայց որ ամենից ստորն է, ձգտում է համոզել գիւղացիներին՝ ծախել իրենց հողերը չնչին գնով ու գաղթել Բաքերդ։ Խենթ մարդ։ Գիւղացիք կասեն՝ „Փոխանակ մեզի համոզելու նոր հողեր գնելու, առաջարկում էք, որ ծախենք մեր արիւնով ձեռք բերածը“։ Ոստիկան-հիւպատոսը մարտ 10-ին կանչեց մենակ Սպարկերտ գաւառի գլխաւոր Շաշօին և նոյն հարցերն ուղղեց։ Շաշօն չըհամաձայնեց և խիստ կերպով պատասխանեց՝ „Մենք մեր հողերը երբէ՛ք չենք ծախիլ. թողէ՛ք մեզ մեր հողերին վրայ մեռնինք։ Կառավարութեանը չենք հաւատում. եթէ դուք այդ չափ հաւատք ունիք թիւրքի և քիւրդի վրայ՝ հագէք քեալախիկը, դրէք իմ քէօլօզը և 2 ժամ քաղաքից հեռացէք. եթէ դուք սալամաթ դարձաք, ձեր գլուխը ձեր վրան մնաց, մենք ամենքս կը վազենք մեր աւերակ դռները“։ Ոստիկան-հիւպատոսը այս յանդուգն խօսքերի վրայ կատաղում է և հրամայում իր կավազին բռնել Շաշօին և տանել վալիին. Շաշօն ընդդիմանում է ասելով՝ „Եթէ ուզում ես հէնց այստեղ իմ վիզը կտրիր, բայց ես վալիին չեմ գնայ“։ Ոստիկանը սենեկից անպատւութեամբ դուրս է անում Շաշօին։

Այս հիւպատոսը քիթը կոխել է հայ թաղերի մէջ և իմանալով ապաստանած գիւղացիների տեղը, բռնի յանդգնում է քաշել այդ խեղճերին „բարենորոգիչ“ փաշաների մօտ։

Թիւրքի՝ դիտաւորութիւնն է եղել գիւղացիներին

դուրս հանել, որպէսզի կարողանայ նրանց Եւրոպայից ստացած ընչին նպաստը, որով հազիւ մահից ազատուած են, խլել տուրքի տեղ և քչացնելով ժողովուրդը վանում կոտորածն յաջողացնել։

Փառք անգլիական կառավարութեանը։

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ

III

$^8/_{20}$ փետրուար 96 թ.

Անթիապի կոտորածը տեղի ունեցաւ նոյեմ. $^4/_{16}$-ին, շաբաթ առաւօտուն Թիւրքաց կողմէն։ Ալայ-պէյի, Տապախանայի, Արչամիճի, Փալասոկաղը, Աղ-Եօլ, Գալ-Ալթը թաղերը և մեծ շուկայէն մինչև Իպնիճուպ գտնուող տները բոլորովին կողոպտուեցան։ Գափափեանէ և Կէմիքլի ըսուած պէգչխտանները, ի մի բան պանդոկներէ զատ հայոց բոլոր խանութները կողոպտուեցան։ Խանութներու թիւն է 1500, իսկ կողոպտուած տներու թիւր 500։ 283 մեռեալ (պաշտօնական) և 150 վիրաւորեալ, 5000 կարօտեալ, 9 տուն և 6 խանութ հրոյ ճարակ եղած։ Բոլոր հարուստներն ու նշանաւոր ազգայինները բանտին մէջ կը հեծեն, ոմանք Տէրիոյ կեդրոնական բանտը (Հալէպ) և ոմանք Անթապ։ Բանտարկելոց իւրաքանչիւրին վրայ զանազան տեսակ զրպարտութիւններ կը յերիւրեն։ Կըսուի թէ՝ իգական սեռէ ալ բանտարկել կուզեն։ Բանտարկելոց թիւն շարունակ աւելնալու վրայ է։

Թիւրքաց կորուստն իբր թէ 25-32 է եղեր։ Դեռ անհանգստութիւնը կը տիրէ։ Ժողովուրդը տան մէջ փակեալ կը հեծէ, թշուառութիւնը սոսկալի է մանաւանդ Մարաշի, Զէյթունի և Եդեսիոյ մէջ։ Կը լսուի թէ՝ տաճկաց պայրամէն վերջ ընդհանուր կոտորած մը եւս պիտի լինի Կիլիկիոյ մէջ։ Սարսափն առած է ամենուն սիրտը, կատարեալ յուսահատութիւն կը տիրէ ամեն տեղ. ապագան մութ է…

Մարաշի մէջ եւս թշուառութիւնը աննկարագրելի է. կորուստն է 820 հոգի և նոյն չափ վիրաւորեալներ։ Բողոքականաց աստուածաբանական դպրոցը հրոյ ճարակ եղած է։ Նոյնպէս հրոյ ճարակ եղած են Ֆրանչիսկեան կրօնաւորներուն երկու մենաստանները և մի վանահայրը։

Եդեսիոյ կորուստն է 2500 հոգի, շատ կին և աղջիկ առևանգեալ։ 14 հայ և ասորի քահանայ և բողոքականաց պատուելի Ապուհայեաթն եւս սպանուեցան։

Պիրէճիկի բնակիչները ոչնչացան բոլորովին, մնացածները բունի թրքացրին. եկեղեցին ալ մզկիթ դարձուցին։ Նոյն բախտին վիճակուեցան նոյնպէս Էհնէշ, Նեզիպ, Ճիպին և ուրիշ հայ գիւղեր։ Ամեն տեղ բանտերու մէջ, որոնք լեցուած են հայերով, կը հեծէ ժողովուրդը։

Զէյթունցիներէն 9 հոգի կոտր կոտր ըրին Ալպաբանի մէջ, ուր ցորեն առնել գնացեր էին։ Թէպէտ կըսուի թէ՝ զէյթունցիք կրկին ապստամբեր են, բայց սուտ է, որովհետև վերջին ծայր կարօտութեան և թշուառութեան մէջ են։

IV

$^1/_{13}$ մարտ 96 թ.

Անթապի դէպքը տեղի ունեցաւ նոյեմ. $^4/_{16}$-ին, շաբաթ առաւօտեան ժամը 2-ին (ը. թ.)։ Աննկարելի է ժողովուրդեան կրած սոսկումն ու սարսափը նկարագրել։ Թիւրք ու քիւրդ խուժանը յարձակեցաւ հայոց խանութներուն վրայ. տակաւին մարդասպանութիւն չկար։

Խանութներու աւերումը լմնցուցին. ժամանակն էր կոտորածի։

Ռէսիմ փաշայի տղան Ալի պէյը ուրբաթ գիշեր մինչև ժամը 7 (ը. թ.) սոֆթաներուն հետ գաղտնի տեսակցութիւն ունեցաւ։ Հետևեալ առաւօտուն ժամը $2^1/_2$ եղած էր՝ երբ շուկաներու աւարառութիւնը լմնցուցին։ Յիշեալ պէյի օդան արաբ և քիւրդերով լեցուն էր, բոլորը զինուած. կերևէր թէ՝ հրամանի մը կըսպասէին։ Սարսափելի էր նոցա տեսքը. կատղած, կարծես կուզէին իրենց դէմ ելած մարդիկը լափել։ Զարդի նշանը տրուեցաւ։

Այնուհետև սկսան կոտորել խեղճ հայերս։ 10,000-ի չափ բաշիբօզուկներ շրջապատած էին Պապիկեանց տունը (քաղաքին նշանաւոր հայ ընտանիքն է), որոնց առաջնորդներն էին Պէյի օդան գտնուած մարդիկը։ 600-ի չափ մարդիկ, բոլոր զինուած նաճախներով, կը կոտորէին Ալա-պէյի թաղին տները։ 800-ի չափ մարդիկ ալ Տապախանայի թաղը պաշարեր էին, որոնք նոյնպէս զինուած էին ատրճանակներով ու կացիններով։ Չորս ժամուան մէջ աւարեցին այս թաղերը. մէջը գտնուած հայերն ալ սպաննեցին։ Պապիկեանց տունը այրեցին, Պապիկեան Աբրահամ երիտասարդն ալ մէջը հրոյ ճարակ ըլլալով։

Մզկիթներէն գնդակներ կը տեղային հայոց թաղերուն վրայ. հայը վախէն պահուտելիք տեղ կը փնտռէր, բայց չէր գտներ։ Բազմութեան միջէն ձայներ կը բարձրանային. „Քիլիսէ մահլէսինէ, Գայաճըք մահլէսինէ“։ Բայց այս երկու թաղերն չը յաջողեցան կողոպտել, որովհետև գնդակով պատասխան կուտային ներսէն։ Նոյն միջոցին կառավարութիւնը զինուորներ ցրուեց՝ խուժանը քաղաքէն դուրս հանելու, բայց այս զինուորները աւելի քաջալերեցին ու սաստկացուցին անոնց կատաղութիւնը. մինչև իսկ իրենք ալ զէնքերով օգնեցին։

Հարիւրի չափ բազմութիւն մ'ալ կարծես կշտացած աւարառութենէ ու մարդասպանութենէ, էշու վրայ եզ շուն մը նստեցուցած՝ փողոցները կը պտտէին, բարձր ձայներով կանչելով՝ „Էրմենիլէրըն սահապի Ինգլիզ կրալիչասի, չափուք էթիշ կեավուրլարը գուրթար“ (Հայոց տէրը՝ Անգլիոյ թագուհի, շուտով հասիր կեավուրները ազատիր)։ Նոյնպէս թիւրք կանայք ամեն տեսակ հայհոյանքներ կը տեղային անտէր մնացած հայերու գլխին։

Բացի եկեղեցիի և Գայաճըկի թաղերէն, ազատեցան նոյնպէս և եկեղեցիներն, գօլէճն ու հիւանդանոցը։

Այժմ որպէս թէ խաղաղութիւնը հաստատուած է, բայց որպիսի խաղաղութիւն։ Կառավարութիւնը ամեն

մի հայ թաղի մէջ իբր թէ պահպանութեան համար մի մի պահակոցներ շինեց, զետեղելով իւրաքանչիւրին մէջ 30-ի չափ զինուորներ. այս իբր թէ ապահովութեան պաշտօնեայ եղող զինուորները ամեն օր կը չարչարեն ու քաղաքավարի կերպով կը կողոպտեն ժողովուրդը։ Եթէ բան մը իրենց զլացուի՝ սպառնալիքներ կընեն և վերջապէս ուզածնին կառնեն։

Աւելին կայ. շան պոչը թիթեղ կապելով երկիւղոտ ու ռամիկ հայերուն ձեռքը տալով կզբօսնուն Անգլիոյ թագուհւոյն անունը տալով։ Հայ կանայք, որոնք երբեմին կը փորձուին եկեղեցի երթալու, զինուորներու կողմանէ ամեն տեսակ գարշելի զրոյցներու կը ենթարկուին։ Վերջապէս անելուակայելի վայրենութիւններ կընեն։

Բոլոր մեծերը բանտարկուած են. չկայ մեկը, որ մխիթարէ տառապեալ ժողովուրդը։ Թէպէտ 5 քահանայ կայ, բայց ասոնք փոխանակ ժողովուրդը մխիթարելու, աւելի կը սաստկացնեն անոր սրտի մէջ տիրող սարսափը։

Թշառութիւնը տիրած է ամեն տեղ, 3500 մերկ ու անօթիներ կան, որոնցմով հայոց ու բողոքականաց դպրոցներն ու եկեղեցիները լեցուն են, որովհետև տուներնին ոչ մի բան չմնաց։ Թէպէտև քիչ ու շատ ունեցողներն իրարու կօգնեն, բայց հոգացողներն ալ քիչ ժամանակւայ մէջ պիտի թշառանան, եթէ պարագաները այսպէս երթան։ 300-ի չափ անձանց կորուստ կայ։ Գրեթէ նոյն չափ վիրաւորներ։

Զ. Օ.

ԽՆՈՒՍ

Ղ՝ոզլի.— 60-70 տուն։ Այս գիւղը երկու օր կարողանում է դիմադրել քիւրդերի յարձակման, զինուած լինելով միայն գերանդիներով և մանգաղներով։ Գիւղի բնական դիրքը և այլ հանգամանքներ նպաստում են հայերին ընդդիմադրել։ Վերջապէս գիւղացիք երբ տեսնում են երկրորդ օրւայ կատաղի խուժանի աւելի ստուարանալը, միևնոյն ժամանակ երբ նկատում են զինուորներ էլ նրանց մէջ, այլևս անկարող լինելով դիմանալ, բարձրանում են մօտակայ սարը, ուր երկու օր առաջ բաւականի ձիւն էր եկել։ Երբ այդ նկատում է թշնամին, ահագին բազմութեամբ մի յարձակումով լեցուում է գիւղի մէջ և չփախչողներից 15 հոգի ամենաանգութ կերպով կամ գնդակահարում և կամ սրախողող են անում։ Իսկ սար բարձրացողները ոտաբոբիկ, մերկ գիշերում են ձեան վրայ, ցրտին զոհ են լինում 3-4 մանուկներ, իսկ հիւանդներ անհաշիւ։ Երկրորդ օրւայ կէսօրին հազիւ մի կերպ փոխչում են և լեցուում Շաւուրմէ գիւղը, թէև նրանք սարի գլխին պաշարուած են լինում։ Տեսարանը ահռելի էր. կանանց և աղջիկների լաց ու կոծը, մանուկների ճիչը ու աղաղակը „մամ՝ հաց տուր ջնսի“, մանաւանդ ամենացաւալի տեսարան է ներկայացնում յղի կանանց երկունքի մէջ լինելը, նրանց դրութիւնը փախչելու ժամանակ. ո՞վ կարող է մտածել մի լոպէ, որ այդպիսիներին ոչ ոք չի կարեկցում։ Սրանցից մի քանիսը հազիւ հազ կարողանում են հասնել Շաւուրմէ, մի քանիսը զանազան դառն նեղութիւններ կրելով, վերջապէս սարը ձեան վրայ ծնում, իսկ մէկը՝ հայ նահապետական ընտանիքի համար ամենասարսափելին, որ համեստ, ամօթխած և պարկեշտ կինը առաջին պատահող օտար տղամարդու խնդրում է տատմայր դառնալ։ Խլաթցի Պօղոսը երբ լսում է հայ կնոջ այդ աստիճան անօգնական մնալը, արտասուքը աչքերում կատարում է տատմօր դերը և կնոջը ու նրա մանուկին անվնաս հասցնում Շաւուրմէ։ Այսպիսի սրտառուչ տեսարաններ շատերը պատահեց։ Ղոզլեցիք այժմ վերին աստիճան անօգնական են և ամեն մի բանից զրկուած։ Շատերը երկու-երեք օր քաղցած են մնում։

Ա ր օ ս.— 30-40 տուն։ Այս գիւղից հիսն յափշտակում են 3-400 ոչխար և 150 տաւար։ Ժողովուրդը թէև զոհ չէ տուել, բայց շատ մեծ սարսափի մէջ է։ Այս գիւղը և Շաւուրմէն, ահից ստիպուած են քիւրդ հեծելագնդերի ամեն կամայականութեան բաւականութիւն տալ, որոնց ոչ մէկը չի կարելի տանել։ Բայց ի՞նչ պէտք է անէ խեղճ խնուսցին. նա ստիպուած է տանել այդ ամենը, քանի որ ոչ ոք իւր բողոքը չի լսիր, արդարութիւն պաշտպանող չկայ։

IV

Վերջապէս հոկտ. 29-ին Շաքիր փաշան Կարինից եկաւ բերդը՝ հաշիւ պահանջելու կատարուած չարագործութիւնների և սխրագործութիւնների համար։ Հինգ առաջին օրը երբ Շաքիր փաշան մտնում է բերդը, Ցակովը էֆէնդին եղելութիւնը մանրամասն նկարագրում է սուլթանի հաւատարիմին և արդարութիւն պահանջում թշառ ժողովրդեան, որ ապրելու ամեն մի միջոցից զուրկ։ Խեղճ Ցակովը էֆէնդին կարծելով, որ ի դուէ կը շարժէ բոլոր գազանութիւնների կատարելուողին, պատմում է մի քանի սրտառուչ տեսարանների կատարուած անգթութիւնները։ Բայց Շաքիրը խկոյն հրամայում է նստացնել ամենամութ բանդում և խիստ կերպով վարուել կեավուրի հետ։

Ահա ձեզ բարեկորոգչի պաշտօնը։ Մէջլիսի հայ ազգի անդամը, այն էլ էֆէնդի տիտղոսով, ճշմարտախօսութիւն և արդարութիւն պահանջելու համար բանդ է նստում, իսկ հազարաւոր իւզբաշիների, համիդէյի հազարապետների և այլն բէկերի անպատմելի կերպով կատարած գազանութիւնները անպատիժ մնում։

Այն բէկերը և առաջնորդները, որոնք մի ամբողջ գաւառ ամայութեան և թշառութեան մատնեցին, զբրկուում են Շաքիր փաշայի բարեսրտութիւնից և արժանանում փաշայի հետևեալ յանդիմանական խօսքերին՝ „Խինզիր օղուլլարի, սիզէ ամբը օլունտի շու կեավուրլարի քէսմիա՞, եօգսա թալան էթմիլէ“ (խոզերի որդի՛ք, ձեզ հրամայւեց այս անօրէններին կոտորելո՞ւ, թէ կողոպտելու)։ Քիւրդ համիդէները համեմատաբար աւելի բարեխիղճ վարուեցին քան արիւնարբու տաճկական պաշտօնեաները, որովհետև բարձրագոյն հրամանի համաձայն քիւրդերը պէտք է սրախողող անէին հայերին և ոչ թէ թալանէին։ Բայց քրդական խուժանը աւելի բաւականացաւ թալանով, քան թէ հրահանգի համեմատ՝ սպաննելով։ Իսկ եթէ ճշտութեամբ կատարուէր այն պատուէրը, որը տուել էր Շաքիր փաշան, այժմ Խնուսում մի հայ անգամ էլ կարելի գտնել։

Շաքիր փաշան 4 օր մնաց Խնուսի բերդում և այդ

4 օրւայ ընթացքում հազարաւոր բողոքներ տւին միամիտ հայերը՝ իրենց կրած վնասների և զրկանքների համար բաւականութիւն պահանջելով. բայց ոչ մի բաւականութիւն չստացան, միայն այս անորոշ խօսքերն էին լսում Շաքիր փաշայից՝ „Սիզ քէնտի երլարընզէ կէտըն, սիզըն սօնընըզ էյ օլանճագ տըր“ (Դուք ձեր տեղերը վերադարձէ՛ք, ձեր վերջը լաւ կը լինի).

Այսպիսի մութ խօսքերից ի՞նչ պէտք է եզրակացնէր խեղճ յուսահատ ժողովուրդը, քանի որ ոչ մի կերպ չպատժւեցին չարագործները, ոչ մի միջոց ձեռք չառնըւեց հայերի դրութիւնը ապահովելու։ Դեռևս մի թոյլ յոյս մնացել է այդ վշտակիր ժողովրդի սրտում՝ „իւր ապագան տեսնել բարելաւած“. բայց այդ աննշան յոյսը բոլորի մէջ չկան. մի որոշ մասը աւելի արկածներ է սպասում, նա սպասում է դեռ աւելի թշւառութիւնների զոհ դառնալ։

ԹԱՄԶԱՐԱ

—

Նախ մեզ հարցնել պէտք է թէ՝ „Կարո՞ղ էք շընչել“. ասոր պատասխանը կրնայ բացատրել այսքան լռութիւնը և մեր սոսկալի վիճակը։

Հոկտեմբեր 16-ին 300 տնւոր հայերուն բոլոր ինչքերն կը թալանեն և 14 հոգի ալ կսպանեն։

Այսքանը չբաւելուն, կառավարութիւնը բոլոր մահմեդականներուն դրդեց, որ աղքատացած ժողովրդին գըթութիւն ցոյց տալով՝ տներնին հիւրընկալեն։

Հայերն հրաւիրւեցան իրենց դրացի կամ ծանօթ տաճիկներու տներն։ Ասոնք չգիտնալով, որ իրենց համար մէկ-մէկ սպանդանոցներ են այդ տներն՝ ընդունեցին հրաւէրը։ Իսլամներն հաւատարիմ իրենց առաջնորդողներու խորհրդին՝ ամեն ինչ ցածութեամբ կարգադրեցին առաջուընէ։ Անզէն հայուն կը մնար, առանց մտածելու, գլուխը կորսնցուցած գնալ հոն, ուր որ զինքը կը տանէին։

Երեք օր վերջ, հոկտ. 19-ին, որոշւած էր բոլոր հայերն կոտորել։ Ցորեկէն երկու ժամ առաջ մոլեռանդներու կատաղութիւնը իրենց գագաթնակէտին հասած էր։ Ճիչեր և ահագին շփոթ, աղմուկ մ՚էր, որ փրթաւ. այս նշանին վրայ հիւրասէր տաճիկներն սկսան մի առ մի պահածնին դուրս հանել՝ „բան չկայ“ ըսելով։ Շուտով ամեն կողմէ պայթեցան հրացաններն ու ատրճանակներն։ Փախչողը քանի մը քայլ չարած, իսկոյն վար կիյնար։ Տեսնել պէտք էր՝ թէ ի՛նչ ճիւաղային անյագ ցանկութիւն մը կար անզէնը վիրաւորելէ վերջ՝ մորթելու և ապա կտոր կտոր ընելով՝ շներու առջև ձգելու մէջ։ Վայրկեան մը մտածողը ինքզինքը երազի մէջ կարծել իսկ կը վարանի։ Տասը տարեկանէն վեր եղողները ջարդ ու փշուր ըրին։ Զօրս եկեղեցիներու թանկագին սպասները կողոպտելով՝ ամենախայտառակ արարքներէ ետք դուրս ելան և սպանեցին երկու քահանան ալ։

Ի՛նչ գիտնամ, ինչպէ՞ս կարող եմ մահէն, աղքատութենէն, վէրքերէ և հիւանդութիւններէ վերջ յառաջ եկած ծայրայեղ թշւառութիւններն բառերու յանձնել և մեր եղբարց իմացնել կրած ամենադառն վիճակնիս։ Երկրաշարժներու, հրաբուխներու և հեղեղներու տւած վնասները բնաւ չէ կարելի բաղդատել այս մարդահրէշ գազաններու պատճառած չարեաց հետ։ Զգալու միակ ճարն է՝ լինել մերկ, նօթի, վիրաւոր... Դառնաշունչ ցուրտը այս ամեն չարեաց լրացուցիչը եղած է։

Այս ի՞նչ աշխարհ է, չենք իմանար։ Կըսւի թէ 250 միլիոն ունինք, բայց ո՞վ է համրողը։

Ամենքս կարօտ ենք պատառ մը չոր հացի.—մուրալ չենք կարող, միայն կը սնանինք ցաւով և ոխակալութեամբ...

Կառավարութիւնը ժողովրդին (մնացածներուն) կը նեղէ, որ այս պատահածներուն համար սուլթանէն շնորհակալ ըլլայ և խոստովանի թէ՝ „Ամեն չարեաց պատճառն սրիկայ հայերն եղած են“։

Ապրիլի 28-ին Գահիրէում կախաղան բարձրացաւ Մուշեղ անունով մի երիտասարդ, որը գրգռւելով վերջին կոտորածներին մասնակցած մի զինւորի պատմութիւններից, սպանել է նրան։ Եգիպտաբնակ բոլոր եւրոպական գաղութների միջամտութիւնը՝ նրա ներումն ստանալու, ապարդիւն անցաւ։

Ահա Անգլիայի պաշտպանութիւնը։

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական սնդուկի մէջ ստացւած են.

Պողպատ քաղաքից Մի խումբ վանցիներից հրացաններ համար 170 րուբլի, Ն. Նախ. 800 րուբ., Հին քաղաքից 600 ր., Նոյն տեղից 200 րբ., Միլաճից 167 րուբ., Պետերբ. 380 րուբ., Մի խումբ օրիորդների ձեռագործից 100 րուբ., Մ. քաղ. հանգանակած 395 րուբ., Եւ 5 րուբ., Աստղից 100 րուբ.։

Մի խումբ ռուս ուսանողներից 50 րուբ.։

Մ. քաղաքից Սխ-ի միջոցով. Գ.-ից 500 րուբլի, Տիկ. Վ. 500 րուբ., Տիկ. Մ.-ից 50 րուբ., Ք.-ից 200 րուբ., Հ.-ից 150 րուբ., Տիկին Օլ.-ից 20 րուբ., Ն. Նախջ. Վր.-ից 45 րուբ., Ռուս կին բժշկից 25 րուբ.

Տապար քաղ. Կեդր. Կօմիտէի սնդ. մէջ ստացւած են. Բ. Վիշտէն 37 րուբ., Մ. Ղլիճէն 3 րուբ., Ժամացոյցէն 438 ղրուշ, Վարդ-Օհանէն 5 օսմ. լիրա, Օր. Մանիշակէն 1 անգլիական ոսկի։

Խար. քաղաքից.—Պերճի միջոցաւ 40 րուբլի։

Գիտակ քաղաքից.—Արմէնի միջոցաւ 5 րուբլի։

Հայկաւանի Դիւցազնուհուց 1257 ֆրանկ։

Ամերիկ.—Սար. Պօղ. 5 դօլլար։

Գերմանիայի հայ ուսանողներից 153 մարկ։

„Նոր-Աշխար“ խմբից 27 ֆրանկ։

Շվ. Ժ. քաղ. X-ից 10 ֆրանկ։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան և նւիրատւութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան։